

ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

—

(Խ Մ Բ ա ն կ ա ր ն վ)



Հ Ր Ա Տ .

Հ. Յ. Գառնակցուրեան

1906

Ժ Ը Ն Ե Վ

ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԼՈՒՋԱՐԿՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



Հ Ր Ա Տ .

Հ. Յ. Գառնակցուրեան

1906

Ժ Ը Ն Ե Վ





Աբրո



Վահանի



Թաթուլ



Սիրոբ



Հրայր



Վազգէն



Կայծակ



Թորգոմ



Ռեօ



Գուրգէն

205

Սերոբի, Վազգէնի, Աբրօի, Թաթուլի, Պետօի,
Հրայրի, Գուրգէնի, Վահանի, Թորգոմի, Վաղարշակի
եւ բոլոր իյնող ընկերներու յիշատակին:

Զեզի, ս'վ անմոռաց ընկերներ, որ ձեր կեանքով ու մահով ժողովուրդին ազատութեան գժուարին ուղին հարթեցիք և ձեր գործունէութեամբ փորձառու դարձուցիք ձեր յետնորդները, ձեր անմահ յիշատակին կը նուիրեմ այս գրքոյկը, յուսով՝ որ անոր ընթերցումը աւելի փորձառու կը դարձնէ անձնուէրները և կը նպաստէ աւելի օգտակարապէս ծառայելու ձեր սիրած գաղափարին:

ԱՆԴՐԱՆԻԿ

1906, Մայիս.

ՋԻՆՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մարտական գործը յաջողութեամբ վարելու համար՝ պէտք է կազմել Զինուորական Խորհուրդ մը: Երկրէն դուրս վայրի մը մէջ: Այս խորհուրդը պէտք է կազմուած ըլլայ մեր գիտակից, անցեալ ունեցող և փորձառու ընկերներէն և ունենայ առնւազն տասներկու անդամ:

Ինչ պիտի ըլլայ ասոնց գործը:

Նախ ընտրել յատուկ մէկը իրենց մէջէն, որ թրդ-թակցի կանոնաւորապէս և արագօրէն՝ Երկրի ընկերներուն հետ: Դարձեալ Խորհուրդը իր մէջէն մէկ քանին ուղարկէ զանազան կողմեր, որոնք ընդունակ ըլլան ճանչնալու զէնք շարժելու կարող երիտասարդները: Ասոնք պիտի դիմեն իրենց գացած տեղի մարմիններուն և իմանան թէ ո՞րչափ կազմակերպուած երիտասարդութիւն ունին: Ապա տասնեակ-տասնեակ բերել տան իրենց քովը, ընտրեն անոնց մէջէն առողջ կազմ ունեցողները և ցոյց տան բժշկին: Զինուորացուն պարտաւոր է, եթէ որեւէ ներքին հիւանդութիւն ունի՝ յայտնել, չի ծածկել: Անկէ վերջ՝ յարմար դատուած երիտասարդներէն ազնիւ խօսք առնել, որ ուրախութեամբ ուխտեն իրենց անձը զոհել Հայրենիքի Ազատութեան և ինկած հազարաւոր նահատակներու համար: Ապա արձանագրել նորակոչներուն իսկական և կեղծ անունները, ո՞րտեղացի ըլլալին և խրկել Զինուորական Խորհուրդին: Այնուհետեւ, Զինուորական Խորհուրդը այս բոլորը կատարելէն վերջ, պիտի միջոցներ ձեռք առնէ ստրվեցնելու

նորակոչներուն հրացան քանդել, մաքրել և նորէն սարքել, ապա հրացան շարժել և կրակել, ուղիղ նշանառութիւն՝ կանգնած, չոքած և կողքի պառկած: Առհասարակ բոլոր զինուորները, բայց մանաւանդ դանդաղ կոտները՝ մարմնամարզութեամբ պարապեցնել, որ արագ շարժին:

Նորակազմ մարտական խումբերը որոշ ժամանակ վարժեցնելէ ետք, ընտրել առժամանակեայ խմբապետ մը և տասնապետներ, որոնք զէնքէ ու զինւորութենէ հասկնան. ասոնք կը շարունակեն վարժեցնել զինուորները: Նորընտիր խմբապետը կը թղթակցի Զինուորական Խորհրդին հետ:

Զինուորական Խորհուրդին պարտականութիւնն է իր ճիւղերուն և Հ. Յ. Դաշնակցութեան մարմիններուն միջոցով ամէն կողմէ զէնք գնել ամենալաւ տեսակէն և փոխադրել տալ հարկ եղած տեղերը: Զէնք գնելու մէջ համաչափութեան պէտք չէ նայել: Օրինակ՝ եթէ ունինք 100 հրացան և պաահեցաւ 1,000,000 փամփուշտ, պէտք է գնել անմիջապէս: Պէտք չէ ըսել թէ՛ «ինչերնո՞ւս է պէտք այդքան փամփուշտը»: Երկրի մէջ ամենէն կարևորը փամփուշտն է:

Այն զինուորները, որոնք կարողութիւն ունին, պէտք է իրենց միջոցներով ամէնաառաջնակարգ զէնքերով զինւիին, որ կարողանան թշնամի զօրքին ու զէնքին հետ մրցել:

Զինուորական Խորհուրդի անդամները խիստ գազտնապահ ըլլալու են թէ՛ իրենք և թէ՛ իրենց հաստատած ճիւղերը:

Զինուորական Խորհուրդը պարտաւոր է բոլոր սահմանագծերուն համար մեծ քանակութեամբ առաջնորդներ (վէլէտներ) գտնել՝ թէ՛ հայ և թէ՛ քրիւրդ, և զանոնք միշտ պատրաստ պահել:

ՕԺԱՆԴԱԿ ԽՈՒՄԲԵՐ

ԽՈՒՄԲԵՐՈՒ ԹԻՒՐ ԵՒ ԺԸՄԸՆԸԿԸ.— Սահմանէն ներս մտնող օժանդակ խումբերու անդամներու թիւը պէտք է ըլլայ 35, 55, 75, 95: Երեսունուհինգը նազագոյն թիւն է, որմէ պակաս պէտք չէ ուղարկել, որովհետեւ ճանապարհներու վրայ գտնուած թշնամին բաւական ուժեղ է: Եթէ խումբը քիչ թուով ըլլայ — շատ դիրքեր չի կրնար բռնել, իր բռնելիք դիրքերը դատարակ կը մնան՝ որոնք թշնամին կը բռնէ: Եթէ զինուորները իրարմէ հեռու դիրք բռնեն՝ կարող է թշնամին մէջերը մտնել և անջատել. եթէ իրարմէ հեռու ըլլան՝ չեն կրնար յարաբերութիւն պահել մէկ մէկու հետ և իրարու ըրածը չեն հասկնար: Եթէ տաս հոգինոց խումբ մը պիտի զրկուի՝ աւելի լաւ է երբէք չի զրկել: Օժանդակ խումբերը պէտք է ճամբայ հանել այն ժամանակ՝ երբ գիշերները երկար են և լուսրնկայ չեն:

ՊԸՏԲԸՍՏՈՒԹԻՒՆ.— Երբ որեւիցէ վայր մը խումբ պիտի ուղարկուի, Զինուորական Խորհուրդը նախօրօք պէտք է այդ խմբի ռազմամթերքը պատրաստէ: Յետոյ նայելով իր մօտն եղած զինուորական ցուցակներուն՝ խմբի համար ընտրէ այնպիսի զինուորներ, որոնք գնալիք ճամբաներուն վրայ գտնուող գիւղերէն կամ քաղաքներէն ըլլան: Երկիր մտնելէն 15-20 օր առաջ՝ պէտք է կանչել այդ զինուորները և ցրել սահմանգլխի այն հայ գիւղերը՝ որոնք անցնե-

լիք ճամբուն վրայ են: Այդ մէկ քանի օրան ընթացքին մէջ զինուորները միշտ քալելու փորձեր պիտի ընեն: Առհասարակ քալելու անկարող մարդիկ պէտք չէ գտնւին այս կեանքին մէջ, որովհետև անոնք ոչ միայն օգտակար չեն կրնար ըլլալ, այլ իրենց ընկերներուն ալ վնաս կը պատճառեն: Խմբապետը պարտաւոր է այդ մէկ քանի օրան մէջ մէկ-մէկ կանչել զինուորները և իմանալ անոնց հրացանի վարժութիւնները: Եթէ պակասութիւն կայ՝ անհրաժեշտ է լրացնել:

ԱՐՇԵՍՏԵՒՈՐՆԵՐ ԽՄԲԻ ՄԷՋ.— Խումբը ունենալու է իր մէջ ումբ ձուլող և պատրաստող, զինագործ, բժիշկ կամ վիրաբոյժ, ատաղձագործ, կօշկակար, դերձակ, լուսանկարիչ, որոնք ամենքն ալ շատ կարևոր են և առանց անոնց՝ խումբը մեծ նեղութիւն կը կրէ:

ԲԱՐՈՅԱՆՆԵՐ ՊԱՀԱՆՁ.— Երկիր մտնողները՝ խմբապետէն սկսած մինչև վերջին զինուորը՝ բարոյապէս բարձր պիտի պահեն զիրենք և ապրելով ժողովուրդին մէջ լաւ տպաւորութիւն պիտի թողնեն անոնց վրայ:

ՍՊԱՌԱՋԻՆՈՒՄ.— Իւրաքանչիւր զինուոր պէտք է ունենայ լաւ հրացան մը՝ առանց որևէ պակասի: Զինուորնե՛ր, լաւ ուշադրութիւն դարձուցէք հրացանի պակասութեան վրայ. եթէ անոր որևիցէ մասը պակաս է կամ վատ՝ չառնէք: Ձեր խմբապետէն լաւ հրացան պահանջեցէք. եթէ լաւը չի տաւ՝ եղածը մի՛ առնէք ու մի՛ երթաք:

Իսկ խմբապետը պարտաւոր է զինուորներուն անթերի, լաւ հրացան տալ: Առանց զինուորներու, դո՛ւն,

խմբապետ, ոչ մէկ ոյժ չես կազմեր և պէտք է անոնց կեանքը շատ ու շատ բարձր գնահատես: Եթէ հրացանը վատ է, զինուորը ձեռքերը ծալած՝ պիտի նստի կողքիդ. հապա ս՛վ կուի:

Իւրաքանչիւր զինուոր պէտք է ունենայ տասն հարւածեան ատրճանակ մը լաւ տեսակէն, հրացանի փամփուշտ՝ 300-350 հատ, իսկ ատրճանակի փամփուշտ՝ 100 հատ: Աւելի պէտք չէ տալ, եթէ զինուորները պահանջեն իսկ: Բոլոր փամփուշտները պէտք է մաքրել և մէկ-մէկ փորձել հրացանի մէջ, որ ետքը փորձանք մը չի պատահի:

Փամփուշտակիրները (պաղրօնտաշները) ծածկւած ըլլան, որ չի թափւին: Մէջքին կապելիք փամփուշտակիրները երեք կարգ և իրարու միացած ըլլան: Մէկ ալ ձախ ուսին կապելու է: Այս ալ լաւ կարւած ըլլալու է, որ նոյնպէս փամփուշտը չի թափի: Ատրճանակի փամփուշտամանը ձգել աջ ուսը:

Անհրաժեշտ է՝ մէկ-մէկ տուփ աւելորդ ռուսական վառոդ, 500 կապսիւլ, հրացաններու բոլոր մասերուն պէտք եղած աւելորդ վինտեր, մէկ-մէկ զսպանակ, մէկ-մէկ հատ 3, 4 կամ 5 փաթանոց մանր զսպանակ (պրուժին) երկու գլուխները կպցուցած: Այս մանր զսպանակները շատ պէտք են, երբ հրացանի զսպանակը թուլանայ և կապսիւլը չկոտրէ, այն ժամանակ այդ մանր զսպանակը կը ձգւի երկար զսպանակին առաջքը, որով կապսիւլը կը կոտրի և առանց խափելու՝ փամփուշտը կրակ կ'առնէ: Միասին պէտք է վերցնել նաև՝ տասնի չափ հրացանի աւելորդ ասեղ, հրացանի ոտք, մուշկա, երկու կամ երեք սիւրմէ (զատօր), իւղով լեցուն իւզամաններ, հրացան մաքրելու շորեր, մէկ-մէկ քանդիչ, փոքր կաշիէ ճզգան մը՝ հրացանի մանր մասերն ու մաքրելու շորերը զնելու համար:

ՀԼԳՈՒՍՏ.— Զինուորներու հագուստը մոխրագոյն պէտք է ըլլայ՝ թէ լազի և թէ չէրքէզի: Իւրաքանչիւր զինուոր ունենալու է մէկ աւելորդ շապիկ կամ ֆանէլ, մեծ թաշկինակ մը՝ քրտինքը սրբելու համար, երկու ձեռք գուլպայ՝ թանձր տեսակէն, ոտքի աման՝ սոյ կամ տպղած տրեխ: Ոտնամանները թեթև ըլլալու են և նեղ գալու չեն ոտքին, որպէսզի չի սղմեն: Զինուորը սկիզբը կ'ըսէ — „ լաւ է. ” բայց երբ երկու գիշեր քալէ, արիւնի հոսանքը վար կ'իջնէ և ոտքը կը նեղէ:

ՈՒՏԵՍՏ.— Իւրաքանչիւր զինուոր պէտք է ունենայ պաշարի համար լաւ կարած տոպրակ մը, մոխրագոյն, կապերը հաստատուն, ուսերուն վրայ գալիք տեղերը բուրդ կամ բամբակ զրած, որ չի ցաւցնէ: Սահմանէն ներս մտնելու ատեն՝ իւրաքանչիւր զինուոր առնազն պէտք է ունենայ երեք օրայ հաց, չորս խոշոր գաթայ, երեք գլուխ հէլւա, վեց գլուխ չորթան, փոքր կտոր մը մեղրամոմ, լիմոնի աղ, ծամելու ձուլթ: Իւրաքանչիւր զինուոր ունենալու է նաև ջրի աման մը՝ թիթեղէ, վրան մոխրագոյն լաթ անցուցած, որ ձայն չի հանէ և չի փայլի:

ԱՄԲՈՂՁ ԽՈՒՄԲԸ.— Պէտք է ունենայ երկու լաւ գիտակ և երկու կողմնացոյց, դրօշակ մը՝ ընդհանուր խմբին և երեքական դրօշակ ամէն մէկ տասնակին՝ սև, ձերմակ ու կարմիր գոյներով: Այս երեք տեսակ դրօշակներուն երեք նշանակութիւնը պէտք է որոշէ խմբապետը: Բացի դրօշակէն՝ խմբապետը պէտք է ունենայ իր փարոլներ և գիտցնէ ամբողջ խումբին: Դրսի ժողովուրդը պէտք չէ հասկնայ այդ փարոլները: Ասկէ գատ, խումբը պէտք է ունենայ սուլիչներ՝ սուլելու համար որևէ թռչունի ձայնով, սուլելու նշանակութիւնն ալ պէտք է գիտնան բոլոր զին-

ւորները և լաւ մտքերնին պահեն: Եթէ հնարաւոր է՝ խումբը ունենալու է նաև փէտատ և երկու թիակ՝ դիրքեր շինելու համար: Խումբն իր հետ ջորիներով փամփուշտ պէտք է ունենայ, թեթև բեռացած:

ՎԷԼԷՏՆԵՐ (առաջնորդներ).— Հարիւր հոգինոց խումբը պէտք է երեք լաւ վելէտ ունենայ: Դեռ տեղէն չի շարժած՝ խմբապետը վելէտներուն առանձին-առանձին կանչել հարցնելու է թէ սահմանէն մտնելէ յետոյ քանի՞ ժամ պէտք է քալել՝ հասնելու համար առաջին դիրքը: Օրինակ, վելէտը կ'ըսէ՝ „Ութ կամ վեց ժամ“. լաւ գիտցած եղիւր որ, 6 ժամ ըսածը՝ 8 ժամ կը տևէ և 8 ժամ ըսածը՝ 10 ժամ: Առ հասարակ վելէտները ժամացոյցէն չեն հասկնար. եթէ հասկնան ալ՝ անոնց հաշիւը ցերեկւայ հաշիւ է: Վելէտները գիշեր ալ ճամբորդած ըլլան, իհարկէ չորս կամ 6 հոգիով են գացած, որոնք աւելի շատ ճամբայ կը կտրեն՝ քան բեռնաւորած հարիւր հոգինոց խումբ մը: Այս հարցումներու ժամանակ պէտք է ներկայ ըլլան նաև տասնապետները: Խմբապետը վելէտներուն պէտք է հարցնէ նաև ճանապարհին պատահելիք ջրերը, քարերը, հասնելիք դիրքի մեծութիւնը: Եթէ առանձին-առանձին բոլոր երեք վելէտները միևնոյն տեղեկութիւնները տւին — լաւ. իսկ եթէ տրած տեղեկութիւնները միևնոյնը չեղած, պէտք է երեքն ալ իրարու քով կանչել և համաձայնութեան բերել զանոնք:

ՊԵՏՏՈՆՆԵՐ.— Խումբը պէտք է բաժնել տասնեակներու. ամէն տասնեակ ունենալու է իր անունը և տասնապետը: Եթէ զինւորները արդէն անգամ մը մտած են Երկիր, թող իրենք որոշեն՝ ձայներու մեծամասնութեամբ՝ իրենց տասնապետները և օգնականները. իսկ եթէ Երկիր մտած չեն, խմբապե-

տը թող նշանակէ տասնապետներ և օգնականներ ա-
նաչառութեամբ: Խմբապետը և խմբապետի օգնականը
կ'ընտրին Երկրէն դուրս գտնւած Զինւորական Խոր-
հրդին կողմէ:

ՇԼՐԺԵԼԷ ԸՌԵՋ.— Խմբապետը պէտք է ընկերացնէ
բոլոր զինւորները, այսինքն իւրաքանչիւր զին-
ւոր ճանչնալու է իր ընկերը և առանց անկէ
բաժնելու՝ անոր կողքէն քալելու է միշտ: Յետոյ խըմ-
բապետը բոլոր զինւորները պէտք է ամփոփէ քանի մը
քաջալերական խօսքերով՝ նկարագրէ հայդուկային կեան-
քի գժարութիւնները, յայտնէ որ կերթան պատե-
րագմի դաշտը և պատկերացնէ այդ կեանքի բոլոր վը-
տանգներն ու նեղութիւնները: Կը պատահի որ թոյլ
ու վախկոտ անհատ մը ըսէ. «Ես չեմ կրնար այդ
կեանքը տանել»: Բայց չէ՞ որ նախօրօք այդ միւսնոյն
զինւորը ազնիւ խօսք էր տւած, ինչո՞ւ դրժէ գայն:
Այս տեսակ դէպքեր չի պատահելու համար՝ անհրա-
ժեշտ է առաջուց տեղական մարտական խումբերու մէջ
խօսել ամեն բան:

ԶԳՈՒՇՈՒԹՒՒՆ.— Մինակ Զինւորական Խորհուրդը,
խմբապետն ու տասնապետները և վէլետները
պէտք է գիտնան թէ խումբը ո՞ր գծով պիտի
սահմանն անցնի: Պէտք է վէլետներուն խիստ պատ-
ւիրել որ, այս կէտը ոչ ոքի չի յայտնեն, որպէսզի լու-
րը չի տարածայնի: Տաճիկ կառավարութեան սահմա-
նազրուիսը գտնւած հիւպատոսները լրտեսներ ունին,
որոնք իմանալուն պէս լուր կուտան սահմանապահ տա-
ճիկ զօրքերուն և ասոնք ալ պէտք եղած միջոցները
ձեռք կ'առնեն, որ խումբին առաջքը կտրեն: Եւ եթէ
առաջին զիշերը չի պատահեն իսկ, ցորեկը ձեր հետ-
քերը կը գտնեն և լուր կուտան աւելի ներսը: Եթէ

մօտակայ սարն էք ապաստանած կամ գիւղը՝ կարող են գտնել և կամ կուի ստիպել:

ՔԻՉ ՈՒՏԵՆԼ ԵՒ ԽՄԵՆԼ.— Իրիկունը հաց քիչ ուտելու է: Պէտք է ըսել՝ «Ճամբայ պիտի երթանք, շատ ուտողը չի կրնար քալել»: Քալել սկսելէ յետոյ՝ ջուր ալ քիչ խմեցէք և ջրի ամանները լեցուն պահեցէք:

ԽՈՒՄԲԸ ՊԵՏՐՄՍ.— Խումբը ոտքի վրայ պատրաստ է. խմբապետը վերջին անգամ կը կրկնէ իր պատւէներն ու կարգադրութիւնները: Յետոյ պէտք է նաև քանի մը խօսք ըսէ. «Ընկերներե՛ր, կտրիճ ըլլաք և աչքբաց, մատանգ ձեր ոտքերուն: Կուողին համար կոխը արհեստ մըն է: Սիրով ըլլաք իրարու հետ և ուրախ: Բոլորիս մարմիններն ու հոգիները միացած մէկ կազմ ունենանք: Յառաջ...»:

ՇԼԻԹԻԵԼՈՒ ԿԵՐԳԸ.— Խումբի առջևէն 30 կամ 50 քայլ առաջ պէտք է քալեն վէլէտ մը և երեք ճարպիկ զինուոր: Ասոնց և խմբին միջև պէտք է քալեն երկու զինուոր: Այս երկու զինուորին ետևէն քալելու է խմբապետը վէլէտի մը հետ՝ խումբին առաջն ընկած: Խմբապետի օգնականն ու տասնապետ մը՝ ուրիշ վէլէտի մը հետ՝ պէտք է կազմեն խումբին վերջապահ մասը, ասոնց պարտականութիւնն է քալեցնել զինուորները, չի թողուլ որ անջատուին իրարմէ: Խմբապետը պարտական է որոշ չափով արագ քալեցնել խումբը, որպէսզի արշալուսին չի մնան և ճամբորդի չի հանդիպին: Երկու տասնապետ պէտք է երթան խումբի կողքերէն: Զինուորներն իրարու հետ պէտք չէ խօսին, ոտքերով ձայն չպէտք է հանեն, առանց հրամանի սիկար չի ծխեն: Զորիով ռազմամթերքը միշտ պէտք է երթայ վերջին տասնեակին հետ:

ԱՌՆՋԻՆ ԳԷՊԻՔ.— Եթէ ունէ դէպք պատահի, խմբապետին հետ գտնուած տասնեակը պէտք է կուրի իր վէլէտին հետ: Վերջին տասնեակները կրակելու իրաւունք չունին: Երբ առջևէն գնացող խումբը կրակ բացաւ, ետևէն եկողները իրաւունք չունին կրակելու, հակառակ պարագային կարող են ընկերներ սպաննել: Խմբապետի օգնականը՝ քովը գտնուած վէլէտին հետ անցնելու է խումբին առաջը և շարունակելու է ճանապարհը: Հեռանալով 100-150 քայլ՝ եթէ քարեր կան՝ դիրք բռնելու է խմբով. իսկ եթէ քար չի կայ, դուրան է, պէտք է զինուորները ցրած պառկեցնել կողքի վրայ: Գիշերւայ կուրիներն առ հասարակ երկու-երեք զալպէն աւելի չեն ըլլար: Խմբապետն իր քով եղած տասնեակով նստել կուելու չէ, այլ արագութեամբ խոյս տալու է թշնամիէն: Երբ բաւական հեռացաւ՝ սուլելու է որոշեալ սուլոցով, որուն պէտք է պատասխանեն ընկերները: Այնուհետև նորէն կը միանան և առաջւայ կազմով կը շարունակեն ճամբան:

ԱՆՀՄԵՆԻ ՎՐԱՅ.— Եթէ պատահին սահմանապահ զօրքեր (ոչ թուրք), որոնց հետ մենք գործ չունինք և որոնց թշնամի չենք — պէտք չէ կրրակել: Երեք անգամ յայտարարելու է թէ՛ բարեկամներ ենք և ճամբորդ: Եթէ լսեցին — լա՛ւ. եթէ չի լսեցին ու զարկին ձեզի, խմբապետը հրամայածին պէս՝ զարկէք անխնայ իբրև թշնամու՝ սրտերուն ու ճակատնուն: Յիշեցէ՛ք Թորգոմի և Որսորդ Գէորգի խումբը:

ՅՈԳՆՈՂ ԸՆԿԵՐՆԵՐԸ.— Յոգնող ընկերներուն պէտք է օգնել: Այս իմանալով՝ թող զինուորները առիթէն չ'օգտուին և թոյլ բռնեն զիրենք, որպէս զի միւս ընկերները օգնեն իրենց: Եթէ իսկապէս յոգնած չես, ազնիւ բան չէ որ քու ծանրութիւնդ միւս

ընկերներուդ տաս: Ի հարկէ եթէ ընկեր մը գլուխը ըլլայ և որևէ մէկ տեղը ցաւցած կամ թեթև վիրաւորած՝ ընկերները պարտաւոր են անոր ծանրութիւնը վերցնելու: Խմբապետը պարտաւոր է զինուորներուն չափ ինք ալ ծանրութիւն առնելու, որ իրաւունք ունենայ հրաման ընել ընկերներուն՝ քայելու:

ԱՌՆՁ ԳՆՅՈՂՆԵՐԸ.— Առաջը գացող վէլէտն ու երեք զինուորները միշտ պէտք է իրենց հրացանները պատրաստ ունենան՝ փամփուշտ լեցուցած և գրկերնին առած: Խմբապետն ու իր տասնեակը նոյնպէս պէտք է հրացանները լեցուցած պատրաստ ունենան: Մնացածները դատարակ կը պահեն իրենց հրացանները: Խմբապետին աչքը առաջ գացողներուն վրայ պէտք է ըլլայ, որպէսզի անոնք որ կողմը որ դառնան, ինքն ալ նոյն ուղղութեամբ տանի խումբը:

ԼԵՐԱՆ ԲԻԹԵՐԸ.— Երբ լերան քիթեր հանգիպին, որոնց միւս կողմը չերևնայ, առջևէն գացող վէլէտն ու 3 զինուորները պէտք է արագ անցնին և լրջօրէն ուսումնասիրեն ճամբան: Մթութեան մէջ կերակին հատ-հատ ծառեր կամ քարեր, կամ գուցէ մարդ՝ որ այդ ընկալին չի շարժիր — պէտք է շատ լուրջ նայել, յետոյ ծռիլ՝ գետնի երեսանց նայել և ապա միայն շարժել:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀԵՐՅՈՒՄ.— Առջևէն գնացող մարդիկ շատ լաւ գիտնալու են թուրքերէն և քրդերէն, բոլորովին նման թուրքի և քրդի խօսելուն: Եթէ յանկարծ մօտէն հարցում եղաւ. „Դուք ո՞վ էք“, առանց տատանելու՝ իսկոյն պատասխանել. „Զօրք ենք“: Եթէ համարձակեցան մօտ գալու և թուով երկու-երեք հոգի են-պէտք է պահտիլ երեք տեղով

և մօտենալուն պէս՝ բռնել անմիջապէս: Իսկ եթէ շատոր են, թող այն ժամանակ, մինչև որ առաջինները կը խօսին՝ խումբը խոյս տայ անշշուկ՝ ձախ կամ աջ կողմը, նայելով թէ տեղն ինչ յարմարութիւն ու քարեր ունի: Ապա առաջ գնացող շորս հոգին ալ խոյս կուտան և կ'անհետանան:

ԿԼՐՃ ՀԸՆԳԻՒՄՏ.— Երբ բաւական գնացիք՝ հարցնել վէլէտներուն թէ՛ ռոտեղ յարմար է ջուր խրմելու, կտոր մը հաց ուտելու և ծխելու համար: Յոյց տւած տեղը կը նայէք և ձեզմէ 30-40 քայլ հեռու պահապաններ կը դնէք: Տղաքը պէտք է քիչ ուտեն, շատ ջուր չի խմեն, ծածուկ ծխեն, լուցկի չի վառեն, ոչ ալ կրակհան: Թուղթէ դավ կայ, որ առանց կրակ տալու՝ կը վառի, գայն գործածել: Ամենաշատը պէտք է նստել քառորդ ժամ կամ տաս րոպէ, որովհետև տղաքը քրտնած կ'ըլլան և կարող են մըրսիլ: Պէտք է շուտ ոտքի ելնել և ամեն հանգստի տեղէն հինգ րոպէ շահիլ, որ առտուն շատ կանուխ գիրքերը հասնիք և խումբը տեղաւորի գիրքերու մէջ: Մեկնէլէն առաջ ջրի ամանները լեցնել տալ: Տասնապետները շատ ուշադիր հսկելու են որ իրենց զինւորները այդտեղ չի քնանան: Քնանալով աւելի կը թուլանան: Վեր կեցած ժամանակ ամեն ընկեր իր ընկերոջ կողքին պիտի ըլլայ: Եթէ ընկեր մը պակաս է, կողքի ընկերը, դեռ խումբը չի շարժւած, պէտք է հարցնէ թէ ո՞ր է ընկերս: Կարող է պատահիլ որ քնացած ըլլայ քարի մը կամ թփի մը տակ: Այս բանը շատ անգամ պատահած է: Ճանապարհ իյնալէ առաջ՝ ամեն անգամ տասնապետները համբելու են իրենց տասնեակը:

Գլորւած կամ պառկած ժամանակ՝ լաւ հսկել որ ատրճանակը յանկարծ կրակ չառնէ՝ քարի վրայ սեղմելով: Աւելի լաւ է նոր սիստեմի ատրճանակ ունենալ,

փամփուշտն՝ ամպարը լեցնել և խողովակի մէջ փամփուշտ չի դնել: Զգուշանալ նաև, որ քարերու վրայ պառկած ժամանակ հրացանի փամփուշտները չի ճմլին. վերջէն՝ առանց իմանալու՝ ճմլած փամփուշտը կը մըտցնեն հրացանի մէջ, չերթար, ոչ ալ կուգայ և կարող է զինուոր սպաննել:

ԱՌԱՋԻՆ ԴԻՐԲ.— Երբ գիշերով հասար առաջին դիրքերը, խմբապետը թող պտտի և քննէ բոլոր քարերը: Այդ տեղ դիրք բռնելէ առաջ, խմբապետ, հարցուր վէլէտներուդ — թէ՛ դեռ բաւական գիշեր ունիս — թէ՛ մօտակայ տեղ աւելի լաւ դիրք կայ: Երբ կայ — հոն գնա՛, մի՛ ըսեր թէ՛ տղաքը յոգնած են: Եթէ երթաս՝ թէ՛ աւելի լաւ դիրքով տեղ կունենաս և թէ՛ միւս գիշերուայ դիրքիդ մօտեցած կ'ըլլաս: Իսկ եթէ չի կայ — այդտեղ կը մնաս: Բնական դիրքեր քիչ գտնւած տեղերը՝ արհեստական դիրքեր շինել տուր:

Քու բռնած դիրքէն բարձր դիրք պէտք չէ գտնուի հոն: Եթէ երկու բլուր կան իրարու մօտ՝ երկուքն ալ բռնէ: Եթէ մէկը հեռու է՝ բռնէ այն բլուրը, որը բարձր է: Երբ տասնեակները իրենց տասնապետներով մտան դիրքերը, խմբապետն ու տասնապետի օգնականները պէտք է պահապան կանգնին, մնացածները քնանան:

Երբ լոյսը սկսաւ բացելի և տեսար թէ՛ մօտակայ տեղերը լաւ քարեր կան, քանի մը զինուոր զրկէ, որ գրաւեն: Բայց այդ քարերը իրարու մօտիկ պէտք է ըլլան, որ կուի ժամանակ հաղորդակցութիւն ունենար և թշնամին չի կրնայ մտնել երկուքին մէջտեղը և ձեր ուժերը բաժնէ: Ասկէ գատ՝ երեկոյեան հեռանալու ժամանակ չէք կրնար միանալ և անջատուած կը մնաք:

Արևը ծագելէն ետք՝ երբ բան չի պատահեցաւ, խմբապետի օգնականը և տասնապետներուն մէկ մարը

պէտք է պահապան կանգնին և միւսները քնանան: Վէլէտները մնալու են խմբապետին քով: Պահապաններու մէկ կամ երկուքը նոյնպէս պէտք է մնան խրմբապետին քնացած տեղը:

ՊԸ ՀԸՊԸՆՆԵՐԸ.— Պէտք չէ կանգնին կամ պտտին, որովհետև հեռուէն կը տեսնուին: Խիստ գզոյշ պէտք է ըլլալ, ուշադիր և կարգով հսկել:

ԸՐ ՀԵՍՏԵԿԸՆ ԴԻՐՔԵՐ.— Զինւորները մեծ քարերով դիրք շինելու են, ո՛չ մանր քարերով: Եթէ դիրքը մանր քարերով շինած ըլլայ, թշնամիին գնդակները մանր քարերուն զարնելով՝ կը փշրեն, որով մէկ գնդակի հետ՝ հինգ-վեց ալ քարի կտրոններ գընդակ կը դառնան՝ և կ'առնեն ձեր երեսին ու կը սպաննեն:

ՏԵՂԻ ՌԽՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆԸ.— Երեք-չորս ժամ քնանալէ յետոյ, պէտք է շուտով արթնցնէք խմբապետը, որ թէ աչքով թէ դիտակով սարի գագաթէն դիտէ չորս բոլորը: Խմբապետը վէլէտներուն հարցնելու է ճանապարհի վրայ պատահելիք գիւղերը, ջուրերը, քիւրդերու վրանները, ցեղերու անունները, անոնց ո՛րքան գէնք ունենալը և այլն, և ասոնք գրէ ամենքն ալ: Հարցնել թէ՛ վազան դիրքը այդտեղէն կերևի՞: Եթէ կ'երևի — դիտակով շատ լաւ նայել. իմանալ երթալիք տեղերը, վազայ դիրքը աւելի լաւ է այսօրանէն, այս գիշերայ ճանապարհն էր շատ՝ թէ՛ վաղը գիշերուանը, և ասոնք բոլորը նկատողութեան առնել:

Դիրք բռնած սարիդ թէ՛ գագաթները և թէ՛ ստորոտները լաւ նայէ. տես ոչխարի հետք կամ ոչխարի նոր պտրուկ կա՞յ: Եթէ կայ — գիտցիր որ հովիւները

ոչխար կը բերեն այդ տեղ: Այն ժամանակ հարկաւոր է խիստ զգուշութեամբ պահել: Հովի շները հոտառութեամբ կը հաչեն և կուզան ձեր մօտ: Պէտք է պահել և չերևիլ, երբ հովիւը գայ ձեր մօտ՝ բռնեցէք: Եթէ վարպետութեամբ չի բռնէք — „հարայը” կը ձգէ և քանի մը հրացան օդին մէջ կը պարպէ ու կոխը կը սկսի:

ԽՈՒՍԱՎՓԵՂՈՒ ՃՄԱԲՆՆ.— Յորեկէն ընտրէ թէ՛ սնրկից յարմար է գիշերը դուրս գալ՝ եթէ կռիւ պատահի, որպէսզի իրիկունը չի շփոթիս: Պէտք է դուրս գալ այն կողմէն, որտեղ թշնամին գիրք չունի: Երբ ըստ տաճկաց ժամը 12-ն եղաւ, հեռաւոր գիրքերը գտնած տղաքը կը հաւաքես շուրջդ, խմբապետ, և կը պատրաստուիս մեկնելու:

ՄԵԿՆՈՒՄ.— Ենթադրենք թէ այդ օրը բան չի պատահեցաւ: Իրիկունը կը քանդէք արհեստական գիրքերը՝ եթէ շինած էիք. լուցկի, ծխախոտի թուղ, ծխախոտի գլուխներ, հացի կտորներ և այլն, չէք թողուր այդտեղ, փամփուշտ չէք թափեր, ջրաման, հրացանի շիշ և այլն չէք մոռնար: Խումբը կը մտնէ առաջւայ կազմին մէջ և ժամը մէկին կամ մէկ ու կէսին՝ ճամբայ կ'իյնաք: Եթէ սարի ստորոտները գիւղի մօտէն պիտի անցնի խումբը, սարէն իջած ժամանակ քարեր չի կլորել և որքան կարելի է ոտքի ձայն չի հանել:

ՎԻՐԱՌՈՐ ԸՆԿԵՐԸ.— Ճանապարհը կէս չեղած, օրինակ, պատահեցան խումբ մը ձիաւոր կամ հետևակ մարդիկ և դուք իրարու ետեւէ քանի մը համագարկ (զալպ) տւիք ու անցաք, կարող է պատահիլ որ ձեզմէ մէկը շատ ծանր վիրաւորի և անկարող դառնայ քալելու, այպէս՝ կամ ոսկրը կտորած

ըլլայ կամ վերքը մահացու, ի՞նչ պէտք է ընել: Սպանել այդ ընկերը՝ շատ դժւար է. բայց եթէ կենդանի թողուք, կարող է ապրիլ, օր մը երկուք և իյնալ թըշնամիներու ձեռք, որոնք հարց ու փորձի կ'ենթարկեն զայն արնաքամ վիճակի մէջ: Կրնայ պատահիլ, որ անգիտակցաբար բոլոր գաղտնիքները խոստովանի: Խոստովանութիւն առնելէ ետք, անկասկած զայն դաշոյններով կտոր-կտոր կ'ընեն. հետևաբար աւելի լաւ է սնէ կերպով վերջ տալ անոր կեանքին: Բայց եթէ խումբն իր հետ ձի կամ ջորի ունի, կրնայ հեծցնել և փոխադրել իր հետ:

ՄԻՆՉԵՆԻ ԵՐԿՐՈՐԿ ԴԻՐՔԸ.— Եթէ առաջին իրիկուն որևէ ընդհարում պատահեցաւ, միւս գիշեր խումբը աշխատելու է քարերու վրայէն, չոր գետինէ կամ թէ ցած խոտոտ տեղերէ քալել, որ հետք չի թողու: Փոշոտ ճանապարհ պատահած ատեն, ամբողջ խումբը թող կռնակը դարձնէ և այնպէս քալէ: Այսպէսով ոտքերու բթերը կը դառնան հակառակ կողմը, ուսկից կուգար: Այս ձևով գուցէ թշնամին շփոթելով կորսնցնէ հետքը. եթէ գտնէ ալ, շատ դժւարութեամբ կը գտնէ և կէսօրն անցած կ'ըլլայ, որով թէ քիչ կռիւ կունենաս և թէ քիչ կուող թշնամի:

ԵՐԿՐՈՐԿ ԴԻՐՔԸ.— Նոր դիրքերը հասածիդ պէս՝ խսկոյն տասնեակներդ ցրւէ, ինչպէս առաջին անգամ և արհեստական դիրքեր շինէ եթէ հարկ կայ: Այս մասին երկար գրելն աւելորդ է, խըմբապետն ու տասնապետները պէտք է քիչ թէ շատ փորձառութիւն ունեցած ըլլան, իրենց պարտականութիւնները լրջօրէն կատարեն և անհոգութեան չի տան. ամեն զոհողութիւն պէտք է յանձն առնեն և գործը չի վտանգեն: Ամէն դիրքի մէջ պէտք է շատ լաւ պահուիլ և տեղերէն ամենևին չի շարժուիլ:

ՀԵՏԵՄՈՒՏ ԹՇՆՆՄԻՆ.— Ձեր հետքերուն հետա-
մտելով՝ թշնամին կուգայ հարա-հրոցով և կը
գոռայ. „Այստեղ են, այստեղ“: Բայց սուտ են,
գիտամա՞ք այդպէս կ'ըսեն, որ ձեր կողմէն շարժում
մը ընէք կամ հրացան բանաք, որ յանկարծակիի չի
գան: Եկողներն, առ հասարակ, առաջ ձիաւորները կ'ըլ-
լան և միշտ կը խաղցնեն ձիերը՝ իրենց կողքերը դէպի
ձեզ տաւ: Պէտք է ամէն կերպ աշխատիլ չերևիլ
այդ ժամանակ և թողուլ որ մօտենան: Բոլոր զինւոր-
ները հրացանները լեցուցած՝ կը սպասեն խմբապետի
հրամանին: Երբ խմբապետը գոռաց. „Կրակ“, զարնել
անոնց՝ եթէ ձիաւորները հանդարտ են, իսկ եթէ շարժ-
ման մէջ են՝ զարնել ձիերուն: Անհրաժեշտ է իրարու
ետևէ չորս-հոնգ համազարկ բանալ. իսկ եթէ թշնամին
շատ է — շատ համազարկեր բանալ: Անոնք այն ատեն
իսկոյն կամ կը փախչին կամ կիջնեն ձիերէն և դիրք կը
բռնեն:

Արդէն թշնամիին եկած ժամանակ՝ անոնց շարժում-
ներէն յայտնի կ'երևայ թէ գիտած են խումբի ուր-
տեղ ըլլալը թէ չէ: Երբէք թողելու չէ որ առաջին
կրակը թշնամին բանայ: Այս բանը խմբապետը նկա-
տողութեան առնելու է, առաջին կրակը միշտ խումբի
կողմէն բացելու է: Այդ կրակէն թշնամին մեծ սար-
սափի մէջ կ'իյնայ:

Առաջին համազարկերը տալուն պէս՝ տղաքը պէտք
է բարձր ձայնով հարա-հրոց բարձրացնեն, իսկ յայտ-
նի ձայն ունեցողները պոռան թշնամիին թէ՛ „Եկէք,
մի փախչիք, մօտեցէք կուինք“: Մեր զինւորները պէտք
չէ քֆրեն. քֆրելը տղամարդու գործ չէ: Համազարկի
ժամանակ անհրաժեշտ է միշտ աղմուկ բարձրացնել,
իսկ հանդարտ ժամանակ՝ կուիլ ու երգել և նայել
խմբապետի հրահանգներուն ու ձեր քովը գտնուած
տասնապետներուն: Պարապ տեղը՝ չըլլայ որ փամփուշտ

վառէք: Երբեմն ալ մի մոռնաք հրացանները մաքրել:
Վիրաւորած ընկերը անմիջապէս բերելու է վիրա-
բուժին քով:

ԹՆԳՆԱԼՈՒԹ.— Եթէ թշնամին թնդանօթով կը ուրմ-
բակոծէ ձեզ՝ և դուք բոլորակ դիրք ունիք, պէտք
անմիջապէս բոլորակը քանդէք և շղթայաձև
դիրք բռնէք՝ նայելով տեղին: Բոլորակ դիրքը շատ վը-
տանգաւոր է թնդանօթին առջև:

Ուշագրութեամբ նայել և հաշուել թէ ո՞րքան հե-
ռաւորութիւն ունի թնդանօթը: Երբ ծուխը երևցաւ՝
սկսեցէք համրել՝ մէկ-երկու և այլն՝ և տեսէք թէ քա-
նի՞ կ'ընէ մինչև ումբի պայթումը. եթէ օրինակ, համ-
րեցիք տասը, ուրեմն 1000 քայլ հեռու է, եթէ 15՝
-1500 քայլ: Մէկ համրանքը 100 քայլ է: Երբ հաշ-
ւեցիք և տեսաք թէ ձեր գնդակները կարող են հաս-
նել թնդանօթաձիգներուն, այն ատեն խմբապետը թող
զատէ քանի մը լաւ նշանառու զինուորներ և զարնել
տայ թնդանօթաձիգներուն:

ԽՈՒՍԱՇՓՈՒՄՆ.— Կռիւր կը տեէ մինչև երեկոյ: Երե-
կոյեան զէմ խմբապետը զինուորական խոր-
հուրդի կը կանչէ տասնապետներն և խմբա-
պետի օգնականը, և շուտով խորհուրդ կ'ընէ ընելիքը
որոշելու: Յորեկը պէտք է աշխատիս թշնամիէն ձի առ-
նելու, որ եթէ վիրաւոր ունենաս, իրիկունը ձիերու վրայ
նստեցնես զանոնք:

Երբ մութն ինկաւ և հեռուէն մարդ չի երևիր,
դիրքերու մէջ եղած խումբը ամփոփէ: Այդտեղ պէտք
է թողուլ վէլէտ մը, խմբապետի օգնականը, տասնեակ
մը և տասնապետ մը, որոնք արագ-արագ կը կրակեն
թշնամիին բացած կրակներուն վրայ: Ամէնքն ալ զա-
նազան ուղղութեամբ կրակ կը բանան, որ թշնամին

կարծէ թէ ամբողջ խումբը հոն է: Այս միջոցին խմբապետը դուրս կը հանէ պաշարած գրութենէն՝ այն կողմով, որ կողմը որ թշնամի չի կայ: Այդ կէտը անիկա առաջուց պէտք է դիտած ըլլայ: Քիչ յետոյ խմբապետի օգնականն ալ առնելով իր տասնեակը և քովն եղած վէլէտը՝ արագ կերպով կը հասնի խուսափող խումբին:

Կը պատահի որ չորս կողմն ալ պաշարած ըլլայ թշնամին այս պարագային ալ դուրս գալ այն կողմէն՝ ուր թշնամին քիչ է: Խմբապետը այս պարագային պէտք է առնէ տասնեակ մը և վէլէտ մը՝ ու առաջ անցնի: Եթէ թշնամիի պատահեցաւ — կուելու է. այդ ատեն խմբապետի օգնականը կ'առնէ մնացած խումբը և լռիկ-մնջիկ կը քալէ: Խմբապետին հետ կուող տասնեակը պէտք է կրակէ և արագ-արագ տեղը փոխէ, որոհետև գիշերուան կուի պահուն հրացանի բերնէն եղած բոցերուն կը զարնեն, ու շուտով անյայտանալով՝ միանայ խումբին, առաջւայ կազմով շարունակելու ճանապարհը:

ՀԵՌԱԳՐԸԹԵՂԵՐԸ.— Պաշարած գրութենէն դուրս եկածին պէս՝ խումբը, եթէ մօտերը հեռագրաթելեր կան, անմիջապէս քանի մը տեղով պիտի կտրէ զանոնք և անցնէ՝ առանց հետք թողնելու: Անշուշտ ցորեկընէ հեռագրած կ'ըլլայ զէպքի մասին, բայց մանրամասնութիւնները դեռ յայտնած չեն ըլլար: Հեռագրաթելերը կտրելը անհունապէս օգտակար է խումբին համար:

ԿՈՒՈՂ ԹՈՒՐԻՐՆ ՈՒ ՔԻՄԻԿԸ.— Կուի ժամանակ առ հասարակ պէտք է քիւրդերէն զգուշանալ: Անոնք աւելի ընդունակ են կուելու, ծանօթ են դիրքերուն և իրենք զիրենք լաւ կը պահեն: Անոնք

օճի պէս գիրքէ գիրք կը սողան, մինչ թուրք գօրքը անծանօթ է տեղին և պահւիլ չի կրնար, կը նայի հրամանատարի հրահանգներուն և փողերու հնչումին: Տասը ֆէղայի ուրախութեամբ կը կուին 100-200 զինուորի դէմ: Եղեր է ժամանակ, որ մեր տղաքը տասը հոգիով կուած են 100-ի դէմ և առանց զոհ տալու՝ յաջողութեամբ դուրս եկած: Սահմանագլխի քիւրգերը թէև զինուած են կանոնաւոր հրացաններով, բայց առանց զօրքի օգնութեան չեն կրնար կուիլ:

ԿՈՒՒ ԺԵՄԵՆԵԿ ՌԻՐԵԽ ԸԼԼԸԼ.— Խմբապետն ու տանապետները, որքան ալ սաստիկ ըլլայ կուրը, միշտ ուրախ դէմք ունենալու և քաջալերելու են հայրուկները. պաղարին մնալու են, շփոթելու չեն:

ԽՈՒՄԲԸ ՌԻՇԵՅԸՎ.— Ենթադրենք թէ խումբը ինչ-ինչ պատճառներով չի կարողացաւ քալել և ուշացաւ. լոյսը բացւած է, բայց դեռ նշանակւած տեղը հասած չէ, դեռ կէս կամ մէկ ժամ կայ գիրքերը հասնելու: Խմբապետը թող նախատեսէ այդ պարագան և խմբապետի օգնականը՝ վելէտի մը և 10 - 12 լաւ քալող զինուորներու հետ առաջ զրկէ, որպէս զի չի լուսացած՝ տեղ հասնին և գիրքերը գրաւեն:

ՀԼՅԻ ԿԸՐԻՔԸ.— Կը պատահի որ ճանապարհին հացը կը սպառի: Եթէ մօտերը հայ գիւղ կայ, գնա՛ և հաց ա՛ռ, մի՛ ըսեր կը մատնւիմ և կուի կը բռնւիմ: Հակառակ պարագային՝ ամբողջ խումբն անօթի կը մնայ, անկարող կ'ըլլայ քալելու և նորէն կը լուսնայ ու չես կրնար գիրքերը հասնիլ, կը մնաս զուրանի վրայ ուժասպառ և ամբողջ խումբը կը վտանգես: Իսկ եթէ մօտերը հայ գիւղ չի կայ, այլ

10-20 տնւոր թուրքերի կամ քիւրդի գիւղ, և գիտես որ ուժդ կը յաղթէ, գնա՛ անոնցմէ՛ն ա՛ն հացը: Հետերնին քաղցր վարւէ՛ և առած հացիդ գրամը վճարէ: Մեկնելուդ՝ հետդ նոյն գիւղէն չորս նշանաւոր քիւրդ կամ թիւրք վերցուր իբր պատանդ, և հեռացիր: Հացիդ մասին պէտք է նախօրօք մտածես, որ այս գրութեան մէջ չիյնաս:

ՏԵՂ ՀԸՄՆԻՒՂ.— Դեռ օժանդակ խումբը սահմանէն ներս չանցած, գրսի Զինւորական Խորհուրդը՝ նայելով յարմարութեան՝ պէտք է լուր տայ երկրին մէջ գտնւած խմբապետին, ներկայացուցիչին կամ Զինւորական Խորհուրդին, թէ՛ երբ կը հասնի խումբը: Երկիր գտնւած ընկերը կամ մարմինը չափազանց գաղտնապահութեամբ այդ լուրը մէկ կամ երկու կարևոր ընկերոջ կ'իմացնէ միայն: Ասոնք պաշարի պատրաստութիւն կը տեսնեն, կ'որոշեն խմբի գալիք վայրը և ցրելիք տեղերը:

Երբ օժանդակ խումբը մօտեցաւ առաջադրւած վայրերին, խմբապետը լուր կուտայ ներսը գտնւած ընկերներուն: Ասոնք գաղտնապէս մէկ կամ երկու վէլէտ պէտք է զրկեն ցորեկով այն դիրքերը, ուր պահւած է եկող խումբը և գիշերով գանոնք փոխադրեն որոշեալ տեղը: Եթէ յանկարծ այդ օրը կռիւ տեղի ունենայ և այդ շրջանէն զօրք զրկւի խմբի վրայ, Երկրի մէջ գտնւած խմբերը պէտք է դուրս գան և կրակեն զօրքին վրայ: Եթէ թուով քիչւոր են, այդ պարագային յարձակուելու են թշնամիին քիչ գտնւած տեղ և շփոթութեան մէջ ձգելու են զօրքերը: Այսպիսով բոլոր եղած ուժեղերը նոր եկող օժանդակ խմբի վրայ չեն զրկուիր և խումբը չի վտանգւիր:

ԽՈՒՄԲԸ ԵՐԿՐԻ ՄԷՋ

ԽՈՒՄԲԻՆ ՀԱՄԱՐ ԿԸՐԳ-ԱԴՐՈՒԹԻՒՆ.— Խումբը Երկրի որոշւած վայրը հասնելուն պէս, իսկոյն տեղը գտնւած ընկերներու հետ պէտք է ժողով մը կազմել և կարգադրութիւններ ընել խումբը ապահով վիճակի մէջ դնելու համար: Եթէ անմիջական գործնական ձեռնարկներու հարկ չի կայ, պէտք է խումբը մասամբ ցրել, որովհետև դժար է հարիւր հոգի կերակրելն ու թագցնելը: Տեղացի զինւորները կը զրկին իրենց գիւղերը, որ այնտեղ ապրին, իբրև տեղացի: Անհրաժեշտ է, որ անոնք խիստ գաղտնապահ մնան և դառնան գաղտնի լրաբերներ. եթէ իրենց գիւղերուն մէջ որևէ լուր իմանան՝ անմիջապէս պէտք է յայտնեն խմբապետին: Գիւղերը զրկւող զինւորներուն իրաւունք տալու է, որ իրենց գիւղի վստահելի երիտասարդներէն խումբեր կազմեն և պիտտոնի հրացանով վարժեցնեն զանոնք՝ մինչև գործի ժամանակ կանչելնին: Այս զինւորները պէտք է զգուշանան մատուցել. երբ տեսան որ կասկածները շատցեր են, անմիջապէս թողելու են իրենց գիւղը և գալու են խմբապետին քով. բայց եթէ կասկածներ չի կան և գիւղէն հեռանալու պատճառ չունին, թող մնան իրենց գիւղերը:

Խումբին մէկ մասն ալ պէտք է ապահով միջոցներով ետ զրկել — արտասահման: Այն ընկերները, որոնք կուզեն վերադառնալ կամ գործը կը պահանջէ որ վերադառնան, պէտք է անտրտունջ լսեն Զինւորական Խորհրդի որոշումները: Վերադարձողներուն պէտք է

տալ ծախս, վէլէտ. եթէ 20 հոգի են՝ ուղեկից զին-
ւորներուն յանձնել 5 հրացան, իսկ եթէ 30 հոգի են՝
7 հրացան, և ապահով ճամբայ հանել ուր որ պէտք է:

ՄՆԸՅԸՆ՝ ԽՄԲԻ ԳՈՐԾԸ.— Խումբի մնացած մասը
զանազան տեղեր պահեստներ կը շինէ՝ ռազ-
մամթերքի համար, պահեստի պաշար կը պատ-
րաստէ, գնդակ կը թափէ, պահեստի վառօդ և կապար
(արճիճ) ձեռք կը բերէ, Երկրի մէջէն լաւ գէնքեր կը
գտնէ և ժողովուրդը կը զինէ ինքնապաշտպանութեան
համար — կարողութիւն ունեցողին սեփական միջոցներով
գնել տալով միշտ — կը պատրաստէ այն երիտասարդնե-
րը՝ որոնք կուելու ընդունակութիւն ունին, իսկ կա-
րողութիւն չունեցողին գէնք կուտայ Կազմակերպութեան
միջոցներէն՝ սակայն գործ սկսելու ժամանակ, ո՛չ թէ
խաղաղ ատեն:

Խմբապետն ու տասնապետները պարտաւոր են կազ-
մակերպւած զիւղերու երիտասարդներուն սովորեցնել —
գէնք շարժել, քանդել, մաքրել և սարքել, ինչպէս նաև
զազանապահութեան վարժեցնել զանոնք:

Խմբապետը լուրջ կերպով ուսումնասիրելու է իր ա-
պագայ գործունէութեան վայրը, թէ՛ լեռները և թէ՛
դաշտերը, ինչպէս նաև շրջակայ քաղաքներն ու գիւ-
ղերը. պէտք է կազմէ իր գործունէութեան ընդհանուր
ծրագիրը. պէտք է հաշիւ թէ՛ իր և թէ՛ ժողովուր-
դին ռազմական ոյժերը և չափէ իր պէտքերը՝ թէ
որքան մարդ կամ ռազմամթերք հարկաւոր է իրեն և
որքան ժողովուրդ կայ՝ կուին մասնակցելու կարող:
Կառավարութեան մէջէն ձեռք կը բերէ լրտեսներ, բայց
կասկածանքով և զգուշաւորութեամբ կը վերաբերի
և ըստ այնմ հաւատք կ'ընծայէ անոնց: Պէտք է հե-
տամուտ ըլլայ նաև մաքրելու համար հայ մատնիչներն
ու դաւաճանները:

ՎԼԸՐԺՈՒԹՒՒՆՆԵՐ.— Խմբապետն ու տասնապետները՝ խաղաղ ժամանակ՝ միշտ զինուորներուն մարմնամարզ ընել տալու և զէնքի վարժեցնելու են: Պէտք է սորվեցնեն զիրք բռնելու ձևերը և զիրքէ-զիրք փոխելու կերպերը. այս փորձերը կարելի է ընել ունէ սարի վրայ: Նոյնպէս անհրաժեշտ է սորվեցնել թէ ինչպէս պէտք է զիրք բռնել դաշտի վրայ: Վարժեցնել աչքով հեռաւորութիւն չափել. օրինակ՝ հարցնել թէ՛ այստեղէն մինչև այնինչ քարը քանի՞ քայլ է. պատասխանը լսելէ յետոյ՝ քայլերով հաշուել հեռաւորութիւնը:

Փորձերու և կուռի ժամանակ ամէն զինուոր անպատճառ տեսնելու է թէ իր արձակած գնդակը ո՛ր հասաւ, պակաս տաւ, աւելի՞ տաւ, թէ կողքերն ինկաւ: Այս բանին լաւ վարժելու է: Եթէ գնդակը չի կարողացաւ նպատակին զարնել իսկ, պէտք է անպատճառ աւելի տայ, ոչ թէ պակաս: Երեք գնդակով կարելի է նպատակին զարնել. մէկը աւելի կուտայ, միւսը պակաս, երրորդը՝ ուղիղ կը զարնէ:

ՊԵՇԵՐԻ ՊԵՏՐԵՍՏՈՒԹՒՒՆ.— Ձմեռը բոլոր հրացաններու մանր մասերն ու կոթերը շինել պիտի տաս, խմբապետ. պատրաստէ նաև քանի մը կոթ աւելի: Յանկարծ կը պատահի որ զինուորի մը հրացանի կոթը կը կտորի, ու երբ պատրաստի ունենաս՝ — անմիջապէս կ'անցնես: Ունեցիր նաև չիվի, թէնէքէի կտորներ, սոսինձ (թութխալ), որոնք պէտք կուզան կոթերու համար: Առհասարակ քաղաքէն փոխադրելիք հարկաւոր ապրանքներդ ձմեռը փոխադրել տուր՝ զարնան համար. ամառը շատ դժուար է, ճամբաները կը փակւին: Ամառը ձեզ շատ կը հալածեն, ուստի զարնանը պատրաստել տուր՝ հալւա, շաքար, թէյ, չորթան, սեր, ժափիկ, աղ զրած պանիր: Հալւայի

ալիւրը, եթէ իւղին մէջ շատ խարկւած է, առնւազն երեք-չորս ամիս կը պահուի: Այս բոլոր պաշարը զինւորներով փոխադրէ զանազան ամուր տեղեր, որ ազէս, արջ կամ գայլ չը պատահին և չուտեն: Երբ խուզարկութիւններն սկսին և հալածեն ձեզ, ուր որ երթաս՝ հաց կունենաս այն ատեն. իսկ եթէ այս նախապատրաստութիւնները չի տեսնես՝ հացի համար ի հարկէ գիւղերը պիտի երթաս և լուրը տարածելով՝ թշնամին շատ շուտով պիտի գտնէ ձեզ:

Զինւորներու ամենակարևոր պէտքերն են՝ ոտնամանը, գուլպան, մէջքի գօտի, որոնցմէ միշտ պէտք է աւելորդ ունենաս, ինչպէս նաև ոտնամաններուն կարկտան ձգելու համար կաշի առնելու և պահելու ես: Զըլլայ որ ոտնամաններուն տակ երկաթէ չիվիներ գարնէք, որովհետև թէ ձայն կը հանեն և թէ հետք կը թողուն:

ՓԱՄՓՈՒՇՏ.— Փամփուշտ լեցնելու համար առանձին տեղ որոշելու է և գործի ատեն պահապան դնելու է, որ արգիլէ ուրիշ մարդու ձեր քով գալը: Փամփուշտը լեցնելու ատեն վառօդը քիչ-քիչ բերէք քովերնիդ: Ռուսական տուփերով վառօդ կը լեցնէ 75 բերդանի փամփուշտ: Անգլիական վառօդ կը գտնուի Տիգրանակերտէն ցած գտնւած երկիրները: Այնտեղէն վեր, դէպի հիւսիս, կը գտնուի ռուսական և տաճկական վառօդ: Զախմախլիի համար վառօդ կը գտնուի Երկրին մէջ, որ ժողովուրդը ինքը կը պատրաստէ:

ՊԸ ՀԵՍՏՆԵՐ.— Պահեստները շինելու է քարքարուտ տեղեր, որպէսզի երթալ-գալու ատեն ոտքերի հետք չերևան: Աւելորդ հրացաններն ու փամփուշտները պահելու համար կը շինես փայտէ սընտուկներ: Հրացանները նախ լաւ կը մաքրես, սիւր-

մէները կը գատես հրացաններէն, կը պատրաստես հասարակ կտաւէ մուշամպաներ, լաւ մը կ'իւղես, հրացանները կը փաթթես այդ մուշամպայով և կը դնես սնտուկներուն մէջ և չորս բոլորը գարիի թեփ լեցնելով՝ կը գոցես: Սիւրմէներն ալ առանձին պահելու է՝ վերը յիշած ձևով: Իսկ փամփուշտները կը լեցնես գարիի թեփով նաւթի թէնէքէները, կը դնես փայտէ սնտուկներու մէջ ու այնպէս կը պահես: Թէնէքէներու բերանը կաւով կամ խմորով գոցելու է, որ օդ չառնէ: Միշտ մեծ թէնէքէներով ձէթի կամ կազի իւղ ունենալու և առնագն ամիսն անգամ մը մաքրելու է պահած զէնքերը: Վառօդ և պայթուցիկ նիւթերը առ հասարակ կրակէ հեռու պահել:

Ռազմամթերքը սարի պահեստները փոխադրելու ժամանակ՝ գուք շալկել տանելու էք, որ ժողովուրդը չիմանայ: Եթէ ժողովուրդէն ունիք երեք-չորս հատ խիստ հաւատարիմ և գաղտնապահ ընկերներ, թող անոնք ալ գիտնան պահեստի տեղը. քու չի կրցած ժամանակը՝ անոնք կերթան կը բերեն կամ միշտ կը հսկեն:

ԹՈՌՏԻԿ ԽՄԲԵՐ

ՆՊԸՍՏԵՒՈՐ ՊԸՅՄԸՆՆԵՐ.— Թուրքիկ խմբերը այն տեղերը լաւ գործ կրնան տեսնել, ուր շատ լեռներ և մեծ տարածութեամբ անտառներ կան, ինչպէս նաև այն տեղերը՝ ուր կուող քիւրդ ազգաբնակութիւն չի կայ: Թիւրք տարրը, բազմատելով քրդերու հետ, այնքան ընդունակ չէ կուի: Եթէ փոքրիկ խումբի մը սարսափը տեսնեն, թուրքերը արևը չը մտած՝ կ'ամրացնեն իրենց դռները. կրնամ ըսել որ, եթէ այդ խումբը հացի պակաս իսկ ունենայ, թուրքերէն կրնայ առնել, բայց պէտք չէ հաւատք ընծայել և պէտք է զգուշանալ թունաւորելէ:

ՌԸԶՄԸՄԹԵՐՔ.— Թուրքիկ խումբերը զանազան տեղեր փամփուշտ ունենալու են, որ պակասած ժամանակ առնեն: Հետեակ խումբի ամէն մէկ անդամ իր վրայ առնելու է 300-350 փամփուշտ, իսկ ճիւղորները՝ 800 հատ:

ԳՈՐԾԵԼՈՒ ԵՂՆԵԼԿԸ.— Երբ ուզեցիր թուրքիկ խումբ մը դաշտ զրկել, պէտք է հաշուես թէ իրենց գործը քանի՞ օրէն կը վեջացնեն. օրինակ 5 կամ 10 օրէն. ճիշտ այդքան ժամանակ տալու ես տասնեակները տանող տասնապետներուն: Ժամանակը լրանալուն պէս՝ անպատճառ անոնք դառնալու են, իրենց յանձնած գործը կատարած ըլլան կամ ոչ: Եւ կամ՝ նախօրօք պէտք է իմացնել թէ՛ «գործն այս վիճակի

մէջ է, ի՛նչ խորհուրդ կուտար : Եթէ ժամանակ տւիր, կրնան քանի մը օր ևս ուշանալ, իսկ եթէ կանչեցիր, պարտաւոր են անմիջապէս ետ գալ: Առհասարակ թը-
ռուցիկ խումբերը պէտք է շատ արագ գործեն:

ԳԻՇԵՐԸ ՄՆԱԼ.— Թռուցիկ խմբերը գիւղերը պէտք է մնան երկու օր, ամենաշատը երեք օր: Երեք օրէն ետքը խումբը արագութեամբ տեղափոխ-
ւելու է՝ առանց ժողովուրդին յայտնի ընելու փոխա-
գրուելիք տեղը:

ՓՈՒՆԳԱՆԸ ՕԳՆՈՒԹԻՒՆ.— Եթէ թռուցիկ խումբե-
րը երկու մասի բաժնւած են, պէտք է երկու
մասը շատ լաւ հաղորդակցութեան մէջ ըլլան
իրարու հետ. մէկին վրայ կռիւ պատահած ատեն՝ ան-
միջապէս յայտնելու է խումբի միւս մասին՝ որոշ գրու-
թեամբ կամ պարօլայով. այս պարօլան առաջուց պէտք
է որոշած ըլլան: Եթէ կռիւ բռնւած խումբը մօտ է
և հրացաններու ձայնը կուգայ, առանց լուրի սպասելու՝
անմիջապէս օգնութեան փութա՛, կամ քու եղած կող-
մէդ խումբին վրայ գացող թշնամիին առաջքը կտրէ՛:

Բայց ի՛նչ իմանայ մէկ խումբը թէ կռիւը մե՞ր գին-
ւորներուն հետ է և ո՛չ թէ քիւրդ աշերի կռիւ է, որ
օգնութեան գայ: Ասոր համար՝ եթէ գիւղերն իրարու
մօտ են և դէմ առ դէմ, կռիւ բռնող խումբը թող
այդ գիւղէն մարագ մը վառէ. դուրան դաշտի վրայ
շատ որոշ կ'երևի վառւած մարագի ծուխը: Միւս խումբն
իսկոյն կ'իմանայ, որ օգնութեան կը կանչւի, ուստի
կը շտապէ: Եթէ մէկ խումբը միւսին օգնութեան չի
գնաց, այդ խումբին տասնապետներն են մեղաւոր. ինչ
ալ որ ըլլայ՝ պէտք է օգնել և գինւորները ուրախութեամբ
հետևելու են իրենց տասնապետներուն:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՎԻՐ.— Տարբեր վայրերու և շրջաններու համար կարելի չէ միատեսակ և միահաւասար ծրագիր պատրաստել. անհրաժեշտ է նայել շրջանի կամ վայրի դիրքերուն, անտառներուն, թշնամի տարրերուն և անոնց թիւերուն: Յաջողութիւն ունենայու համար, նախ գործունէութեան վայրը կամ շրջանը շատ լաւ ուսումնասիրելու է. ապա այդ շրջանի համար ներքին համապատասխան կանոնագիր մը կամ ծրագիր մը մշակելու է, որպէսզի գործնականօրէն կարելի ըլլայ գործադրել: Նախ քննել և տեղեկանալ թէ՛ տեղական մարմինը որքան մտաւոր և ռազմական ուժ ունի, որքան փորձառութիւն ու գիտութիւն ունի, ապա միայն թոյլ տալ գործի անցնելու և գործելու, ըստ իրենց ներքին ծրագրին կամ կանոնագրութեան:

Որեւիցէ վայրի մը ուսումնասիրութիւնը և անոր կանոնագրութիւնը նախօրօք ղրկել Երկրէն դուրս գտնած Զինուորական Խորհուրդին, որ ան ալ քննէ և քիչ թէ շատ տեղեակ ըլլայ կատարելիք գործերուն: Կատարելիք ձեռնարկներու ծրագիրը զրսի Զինուորական Խորհուրդը պէտք է խիստ գաղտնի պահէ: Երկրի մէջ գտնած Մարմինը ունի շատ ուրիշ գաղտնիքներ, զորս պարտաւոր չէ յայտնելու զրսի Զինուորական Խորհուրդին. գործունէութեան ընդհանուր ծրագիրն ու վայրի ուսումնասիրութիւնը կը բաւէ:

ԿԼՆԻԿԱԼ ՏՐԵՍՏՈՒԹԻՒՆ.— Իբրև ապստամբավայր ծառայող թէ՛ քաղաքը, թէ՛ գիւղը և թէ՛ անոնց քարերը, ջրերը, հովիտները լաւ մը ուսումնասիրելէ ետքը, գեռ աշունէն՝ գլխաւոր գիրքերու մէջ պէտք է գետնափոր տուններ շինել և որոշ չափով պաշար հաւաքել:

Շրջանի մը ապստամբութեան համար առնւագն ունենալու է 400 մօսինի կամ ուրիշ հրացան, որը կարողանայ 2000 մէթր կամ 3000 քայլ նետել: Ժողովուրդը գինելու համար պէտք է ունենալ առնւագն 500 լաւ բերդան կամ այնպի հրացան, իւրաքանչիւրը 500 փամփուշտով: Մօսինները ունենալու են 1500 փամփուշտ: Անհրաժեշտ է ունենալ առնւագն 15 ձեռք փամփուշտ լեցնելու գործիք: Նախօրօք պատրաստած ըլլալու է բաւականաչափ կապսիւլ, վառօդ, թափած գնդակ: Եթէ կապսիւլ հանելու և դնելու գործիք չունիս, առաջուց շինել տւած կ'ըլլաս 100 հատի չափ պողպատէ հերիւն՝ կոթներով, որոնցմով արագ կը հանի ու կը դուրս կապսիւլը: Ամենակարևորը փամփուշտ սեղմող և վրայ բերող գործիքներն են, որոնք շատ լաւ տեսակէն ըլլալու են, որպէս զի իսկական փամփուշտէն մագաչափ տարբերութիւն չունենան անոնց սեղմած փամփուշտները: Պէտք է ունենաս նաև փամփուշտի գնդակ անցած տեղը սեղմող գործիքներ, որ լաւ սեղմեն և գնդակները չ'իյնան:

ՅԼՐՉԼՆՈՒՄ ԵՒ ՆԼԻԿԱԳՈՒՇՈՒԹԻՒՆ.— Ապստամբութիւն սկսելու է գարնանը, երբ լեռներու վրայ գեռ քիչ ձիւն կայ:

Եթէ ապստամբավայրից չորս բոլորը քիւրդի գիւղեր կան, լաւ պատրաստելէ յետոյ՝ լուր խրկէ անոնց՝ „24 ժամ ժամանակ կուտամ, որ բառնաք ու հեռանաք ձեր գիւղերէն : Քիչ ուժ ունեցող գիւղերը

այդքան ալ չեն սպասեր, լուրդ առնելնուն պէս՝ կը բառնան ու կը հեռանան: Երբ հեռացան, կ'այրես անոնց գիւղերը և սահմանդ այդպիսով կ'ընդարձակես, որ եկող թշնամին բնակարան և հանգստանալու տեղ չունենայ: Եթէ քեզմէ մէկ կամ երկու ժամ հեռու քիւրդ գիւղեր գտնւին, զօրքը կուգայ կը գրաւէ գանոնք և դիւրութիւն ունենալով՝ յարձակում կ'ընէ վրայ:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԵՒ ՌԱԶՄԱՄԹԵՐԻՔԻ ԳՐԱԿՈՒՄ.— Երբ կառավարութիւնն իմացաւ թէ Երկրին մէջ հրոսակախումբ կայ, չի սպասեր մինչև որ դուք պատրաստուիք և զօրեղ հարուած տաք իրեն: Այդ ժամանակ դուք աւելի շուտ պատրաստուելու և յարձակուելու էք թշնամիին վրայ՝ յանկարծակիի բերելով գայն: Եթէ թշնամին ձեզի չափ է կամ երկու անգամ ձեզմէ աւել և իրեն հետ ունի 50 կամ 100 սնդուկ փամփուշտ, առանց ժամանակ կորսնցնելու՝ յարձակեցէք: Բայց լաւ նայեցէք, որ ձեր յարձակած ժամանակ թըշնամիին մեծ մասը հեռուն գտնւի, որպէս զի չի կրնայ օգնութեան գալ և ձեզ վտանգել:

Յարձակումը պէտք է կատարէք գիշերը, ժամը 4-5-ին՝ ըստ տաճկաց: Անոնց քնանլու փողը կը հնչէ 3-ին: Եթէ յարձակման ժամանակ լուսին չըլլայ, աւելի յաջողութիւն կունենաք: Երեկոյեան մուրը գալուն պէս, այդ շրջանի բոլոր հեռագրական թիւերը կտրեցէք: 100-200 զօրքը մէկ պահակ կունենայ՝ 15 հոգիէ բաղկացած, որ կը շրջի գիւղի կամ վրաններու շորս բոլորը, նայելով թէ զօրքը գիւղն է իջած, թէ վրաններու մէջ կապրի:

ՅԱՐՁԱԿՈՒՄ՝ ԵԹԷ՝ ՎՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԵՆ.— Եթէ թշնամին վրաններու մէջ է, պէտք է լրտես մը զրկես, որ իմանայ թէ վրաններու տակերը

փորւած են մէջքի բարձրութեամբ: Անոնք՝ իրենց վախէն յաճախ կը փորեն և դիրք մը կը շինեն: Եթէ վրանները դիրքեր ունին, դիրք չեղած կողմէն զրկէ 20 գինուր, որոնց տասը՝ թող քիչ մը հեռուն դիրք բռնէ, իսկ միւս տասը առաջ գայ՝ փոքր ինչ իրարմէ հեռու հեռու: Թշնամիին գինուրները վրաններէն դուրս կուգան և կ'երթան այդ տասը հոգիին վրայ. տղաքը թող մէկ-մէկ անգամ կրակեն և փախչին դէպի իրենց միւս տասն ընկերները, որոնք արդէն արհեստական կամ բնական դիրքի մէջ են մտած: Այն ժամանակ թող խմբապետը մնացած խմբով՝ շատ արագ և ցրած կազմով յարձակի և շուտով մտնէ վրաններուն մէջ շինւած դիրքերը: Ձեր այն 20 ընկերները՝ որոնք ձեր դիմաց դիրք ունին, պէտք է շատ լաւ պաշտպանւած ըլլան իրենց դիրքերուն մէջ, որպէս զի ձեր գնդակներէն չի վնասուին: Այսպիսով թշնամին կը մնայ ձեր երկու կրակներուն մէջ:

Այս պայմաններով կատարւած յարձակում մը՝ շատ մարդ չի կրնար սպանել և մեծ յաջողութիւն չի խոստանար:

Իսկ եթէ վրաններու տակ դիրքեր չեն շինւած, գիտցիր որ գինուրները երկու-երեք օրէն պիտի փոխադրին ուրիշ տեղ: Այն ժամանակ, վերը ասուած ձևով նորէն 20 հոգի դարան թող մտնան, իսկ խմբապետը թող յարձակի կողքերէն և ետևէն: Այսպիսով մէկ կողմը իբր թէ բաց թողած կ'ըլլաք: Թշնամիէն չինկածները փախուստ կուտան այդ կողմով՝ ուրկէ կրակ չի բացուիր: Բայց դուք այն կողմն արդէն 20 հոգի պահած ունիք, որոնք, երբ փախչող թշնամին մօտենայ 30-35 քայլ, թող զարնեն: Բայց չըլլայ որ հեռու եղած ժամանակ կրակ բանան. կարող են ընկերներուն վնասել: Փախչողները խիստ կը շփոթուին. կրնայ պա-

տահիլ որ մինչև անգամ ձեռքերնին հրացանի սիր-
մէն չի բռնէ կամ թէ իրարու զարնեն:

Գործը վերջանալէն ետքը՝ կիսամեռ զինուորները դա-
շոյնով սպաննել, ռազմամթերքը հաւաքել և արագ փո-
խադրել խումբին մշտակայ բնակավայրը: Արդէն նա-
խապէս միասին բերած ըլլալու է տասը ձի կամ ջորի,
նկատի ունենալով ռազմամթերքին քանակութիւնը, որ-
պէս զի արագ փոխադրուի աւարը:

ՅԱՐԶԱԿՈՒՄ՝ ԵԹԷ ԳԻՒՂԻ ՄԷՋ ԵՆ.— Եթէ այդ 100
կամ 200 զինուոր գիւղի մէջ են բանակած՝
կազմակերպւած ըլլայ այդ գիւղը կամ ո՛չ՝
պէտք է շատ լաւ ծանօթ ըլլաս թէ՛ գիւղի տներուն
և թէ՛ շուրջը գտնւած հովիտներուն ու քարերուն:
Եթէ այդ գիւղին մէջ գիւղացի զինուոր տղաքներ կան
և անոնց վրայ լիովին վստահ ես, կրնաս նպատակը
անպաշտօն կերպով յայտնել: Անոնք ամեն յարմարու-
թիւն ունին շատ լաւ լրտեսելու գիւղը գտնւած զօրքը:

Յարձակման իրիկունը՝ անոնք գիւղի եզերքը քեզի
լուր կը բերեն թէ զօրքը քանի հոգի պահապան ունի
և մնացածը քնած է, թէ արթուն: Տղոց կը պատուի-
րես որ գիւղի շները ներս առնեն: Հետո պէտք է առ-
նես բարակ չուան և թէնէքէներով վառօդ՝ երկու-
երեք լիտրի չափ: Գիւղի լաւ գիրք եղած կողմը կը
զրկես 20–30 հոգի, որ պահին. իսկ դուն ետևէն և
երկու քովերէն մեծ զգուշութեամբ և զաղտնի կը մօ-
տենաս: Եթէ գիւղի տղաքը քաջութիւն ունենան, կա-
րող են մինչև անգամ քեզմէ առաջ գարնել այն պա-
հապաններուն, որոնք կանգնած են զօրքի քնացած տու-
ներուն առաջ: Երբ հասնիք զօրքին պառկած տուններուն
տանիքներն ու դռները, տասնհարւած ատրճանակնե-
րով ու հրացաններով կը կրակէք: Եթէ անձնատուր

եղան — լա՛ւ. բարակ չուանով բոլորն ալ կը կապես և երկու տասնեակով կուզարկես որոշ տեղ մը:

Երբ տեսնես որ ներսէն դիմադրութիւն կայ, այն երկու լիտր վառօդը պարունակող ամաններուն՝ որոնք շատ հաստատուն պիտի ըլլան և որոնց ֆիթիլները պատրաստ՝ կրակ կուտաս և տանիքէն կամ պատուհանէն ներս կը ձգես: Այս միջոցին պէտք է դիմել, երբ ումբ (բօմբ) չի կայ: Այն ժամանակ մեծ պայթումներ առաջ կուգան և ցնցումէն կարող է տունը քանդուիլ. եթէ չի քանդուի իսկ — զօրքն անձնատուր կ'ըլլայ անպատճառ:

Գործը յաջողելէն յետոյ գիւղը կ'այրես. ատոր համար հետո կանխաւ կազիւղ տարած կ'ըլլաս, որպէս զի յաջողիս արագ այրել: Գիւղացոց մեծ մասն արդէն փախած կ'ըլլայ, մնացած մասն ալ հետո կը վերցնես կը տանիս՝ գրաւած ռազմամթերքին հետ: Եթէ յարմարութիւն չի կայ գիւղացիները հետո վերցնելու, կը դրկես շրջակայ հայ գիւղերը:

ԱՐԸԳ ԶԱՐԶԱԿՈՒՄ.— Երբեմն կառավարութիւնը երկու-երեք հարիւր զինուորով խուզարկութիւն կ'ընէ և հետը մեծ քանակութեամբ փամփուշտ կը բերէ: Այդ պարագային կշռէ՛ ուժդ. եթէ կրնաս երկու ժամայ մէջ ոչնչացնել՝ յարմար առիթը մի կորսնցնէր — յանկարծակիի բերելով՝ յարձակիր և վերցուր փամփուշտները: Մի սպասեր որ զօրքը երկար մնայ և զիրքեր շինէ. առանց ժամանակ տալու յարձակիր — միջոց մի տար անոնց՝ ծանօթանալու այդ տեղերուն: Անոնց երեք-չորս հարիւրին կէս թիւն ալ եթէ ունենաս՝ նորէն յարձակիր: Ամէն թուրք զինուոր մէկ-մէկ գաւառէ է, տեղերուն բոլորովին անծանօթ, մերկ ու բոպիկ, կրնամ ըսել՝ փորը միշտ կուշտ ալ չէ: Եթէ դանդաղիս, այն ատեն տեղին ծանօթ շրջակայ քիւր-

դեր բերելով՝ անոնք կը սկսեն խուզարկութիւնները:

ԹՈՒՌՆԻՅԻԿ ԽՈՒՄԲԸ.— Կոիւնքերու այդ միջոցներուն երկու թուուցիկ խումբ հանելու է. մէկը ձիաւոր, իսկ միւսը ոտաւոր: Ոտաւոր խումբը՝ անըւազն 20 հոգիէ, իսկ ձիաւորը 15-է բաղկացած ըլլալու է: Նախ ձիաւոր խումբը թող կտրէ հեռագրաթիւերն ու սիւները. ոտաւորը թող գտնուի անոր հակառակ կողմը՝ 8 ժամ հեռու: Հեռագրաթիւերը կը տրելէ յետոյ՝ ձիաւոր խումբն ալ թող անցնի ոտաւորներու կողմը: Անկէ ետք ալ մի սպասեր կառավարութեան ինտրիգներուն. անիկա կուզէ քեզի հետ խաբեբայութեամբ և շողոքորթութեամբ բանակցիլ — չ'ընդունես: Ուր որ թշնամիին ուժը քիչ է և համոզիս թէ քիչ գոհ տալով կարող ես յաղթել — մի սպասեր, յարձակիր, բայց միշտ իրիկան դէմ:

ԳԵՐԻՆԵՐԸ.— Եթէ տեղ և յարմարութիւն ունիս, գերիները լաւ կը պահես և լաւ կը կերակրես, իրենց վիճակը իրենց ձեռքով գրել կուտաս և իրենց կնիքով կնքած՝ կը դրկես զինուորական հրամանատարին և մէկ քանի յայտնի անձերու: Բայց մէջերնիդ պէտք է լաւ տաճկերէն գիտցող ըլլայ, որ կարգայ այդ գրութիւնը. կրնայ ըլլալ որ գերիները սուտեր գրեն: Գերիները երբէք ազատ չես թողուր և կը սպասես, թէ ինչ դիրք կը բռնէ քու դէմ կառավարութիւնը:

ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԵՒ

ՆԿԱՏՈՂՈՒԹՒՒՆՆԵՐ

ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ՀԱՅԳՈՒԿԱՅԻՆ ԿԵՆՆԵՐԸ.— Զինւոր-
նե՛ր, հայգուկային կեանքը տանողին համար
ամենաբարձր կեանքն է աշխարհիս մէջ, չի
կրցողին համար՝ ամենադժուար կեանքը: Տաս տարւայ
մէջ չի տեսայ զինւոր մը՝ որ բնական մահով մեռնէր,
ամէնքն ալ շատ առողջ կեանքի մէջ էին: Կըսեմ որ,
մեր վեհ ծաղկաւէտ սարերու օդերը և հրաշալի աղ-
բիւրներու ջրերը, կերած բանջարեղէնները, կաթն ու
մածոնը և իրենց խղճի հանգստութիւնը, իրենց պատ-
ւական հրացանները և ունեցած ոսկեգոյն փամփուշտ-
ները շատ ու շատ կ'օգնէին զինւորներու առողջու-
թեանը:

Բայց այս պատասխանատու կեանքին մէջ՝ իւրաքան-
չիւր զինւոր պարտաւոր է՝

1. Խիստ գաղտնապահ ըլլալ:
2. Անպայմանօրէն ենթարկել գործի պահանջած
կարգապահութեան (զիսցիպլինին):
3. Վարք ու բարքով մաքուր և անարատ մնալ:
4. Իրարու մէջ սուտ չը խօսիլ:
5. Զինւորական Խորհուրդի գաղտնիքները իմանալու
չի հետամտել, քանի որ արդէն ձեզի վերաբերեալ
խնդիրները կը յայտնեն, իսկ ձեզի չի վերաբերած
գործը իրենց մէջ կը պահեն:

6. Իրարու վիրաւորական խօսքեր չըսել: Եթէ պատահի այդպէս դէպքեր, խռով չի մնալ, այլ կէս ժամ չ'անցած հաշտուիլ: Եթէ ձեր խռովութիւնը մէկ օր տևէ, դուք արժանի չէք ըլլար յեղափոխական անունը կրելու:

7. Պահապանութեան ժամանակ խիստ զգոյշ ըլլալ, չի քնանալ, չերգել, չի ծխել, իրարու հետ բարձր ձայնով չի խօսիլ, լուցկի չի վառել, կրակահան չի զարնել:

8. Զէնքերն ու փամփուշտները մաքուր պահել:

9. Հրացանի մանր մասեր կամ փամփուշտ չի փոխել իրարմէ:

10. Զէնքերը վրայէն վար չառնել առհասարակ և առաւօտուն արշալուսին ամէնքն ալ պատրաստ ըլլան:

11. Առանց հրամանի ունէ տեղ չ'երթալ:

12. Պիտի ներկայանան անանկ պայմաններ՝ ուր շատ ժամանակ ձեր ռազմամթերքն ու պաշարները դուք պիտի շալկէք և փոխադրէք որոշեալ պահեստները. շատ անգամ ալ պիտի պատահի, որ ձեր հացն ու կերակուրը դուք պիտի եփէք և ձեր լաթերը դուք պիտի լաք: Այս ամենը պէտք է անէք անտրտունջ:

13. Ժողովուրդին հետ սիրով և քաղցրութեամբ պիտի վարուիք. եթէ ժողովուրդէն անհատ մը ձեզի վիրաւորական խօսք ըսաւ, իրաւունք չունիք ձեռք բարձրացնելու, — կարող էք ձեր պետերուն բողոքել և անոնք հարկ եղածը կը կարգադրեն: Փոխադարձաբար ժողովուրդն ալ իրաւունք չունի զինուորին վրայ ձեռք բարձրացնելու. կարող է բողոքել զինուորներին պետերուն և անոնք հարկ եղած պատիժը կուտան:

14. Առանց բանաւոր պատճառի խումբէն հեռանալու իրաւունք չունիք. եթէ Զինուորական Խորհուրդը յարգեց ձեր պատճառները, ապահով միջոց ցոյց տալով՝ ձեր ուղած տեղը կը զրկէ ձեզ. իսկ եթէ պատերազմական դրութեան մէջ էք, ձեր հեռանալու պատ-

ճառները որքան ալ յարգելի ըլլան, հեռանալու իրաւունք չունիք. եթէ հեռանաք, գործը դաւաճանած կ'ըլլաք:

15. Առանց խմբապետի հաւանութեան՝ անհատապէս թղթակցելու իրաւունք չունիք: Ասոր պատճառն այն է, որ նախ զաղտնիքներ կրնան երևան ելնել և երկրորդ՝ կարող է նամակը բռնելի և անկէ ահագին վտանգ յառաջ գալ: Ուստի պէտք է խմբապետին հարցնէք. եթէ նամակը անվտանգ է և գործին չի վերաբերիր՝ խմբապետը պարտական է ինքն ուղարկել. իսկ եթէ անյարմար է — չի դրկեր:

16. Կերակուրի և հագուստի համար խստապահանջ պիտի չ'ըլլաք. ամէն մարդ մտածելու է հասարակութեան դրամներուն վրայ և շուայութեամբ ծախսելու չէ:

17. Ձեր բարեկամներէն կամ տունէն ինչ որ ընծայ ստանաք, պէտք է յանձնէք ձեր խմբապետին, որը տեսնելով թէ ձեզմէ որոնք պէտք ունին և որոնց յարմար է — անոնց կուտայ:

18. Ձեր հագուստի կամ ուտելիքի մասին խստապահանջ պիտի չ'ըլլաք: Մեր ամենակարևոր պիտոյքներն են՝ փամփուշտ, վառօդ, գնդակ, կապսիւլ, պահեստի պաշար, փամփուշտ լեցնելու գործիքներ, ոտամաններ, գուլպայ: Բայց ձեր տոպրակներէն ուտելիքը ամէն ժամանակ պակաս չ'ընէք: Ուտելիքին պէտք է հաւասար նայէք: Խնձոր մ'ալ ունենաք, բաժնելու էք: Իսկ կերակուր կերած ժամանակ՝ բոլոր զինուորները տասնեակ-տասնեակ պիտի նստին և տասնապետներն ալ իրենց տասնեակներուն հետ: Տասնապետները՝ կերակուրի ժամանակ՝ առանձին պէտք չէ որ նստին:

19. Ոգելից ըմպելիքները արգելած է խումբերուն, հետևաբար պէտք չէ երբէք գործածէք: Եղեր է ժամանակ, որ ժողովուրդը խմցուցեր է տղայոց, միւս կողմէն ալ մատնիչը մատներ է կառավարութեան:

ՅՈՐՂՈՐՆԵՐ.— Զինւորներ, չի կարծէք թէ խմբապետութեան մէջ մեծ փառք մը կայ: Ընդհակառակը՝ խմբապետը ամբողջ խումբին ծառան է և բոլոր մտահոգութիւնը իր վրայ ծանրացած է. զինւորներուն կեանքի ապահովութիւնը, գործերի մէջ ունենալիք հեռատեսութիւնը, կառավարութեան ընելիք դաւերը նախատեսելը, ժողովուրդը զինելու խնդիրը, զինւորներու պիտոյքները, կոխներու մէջ ունենալիք քաջութիւնը, քիչ զոհ տալով կամ ամենևին զոհ չի տալով կոխէն դուրս գալը և ունեցած ճարպիկութեամբ երկար տարիներ գործ շարունակելը — այս ամէնը խմբապետին հոգալու բաներն են: Այս բոլորին հետ կապ չունի անշուշտ ժողովուրդն ալ. քանի որ առանց անոր քաջալերութեան և գործնական մասնակցութեան՝ ոչինչ չենք կրնար ընել:

Կը պատահի որ ձեր խմբապետը զանազան մտատանջութիւններով գրգռւած՝ բոլորովին անտեղի՝ մէկ կամ երկուքիդ վրայ բարկանայ և անարդար քայլեր առնէ: Չըլլայ որ վիրաւորիք: Իհարկէ՝ դուք երբ մէկ մտածէք, անիկա ստիպւած է հարիւրը մտածել, ադոր համար ալ դուք պէտք է զիջող ըլլաք, չի վիրաւորիք և չի խոռովիք: Առհասարակ բոլոր ընկերներդ պէտք է իրարու վրայ ցաւիք ու գուրգուրաք. այս պիտի ըլլայ ձեր գլխաւոր ազնութիւններէն մէկը: Խմբապետն ալ զգալով որ իր ըրած յանդիմանութիւններն ու վիրաւորանքը անտեղի էր՝ պիտի ջանայ անմիջապէս զինւորին սիրտը առնել:

Թէ կուի ժամանակ և թէ խաղաղութեան՝ միշտ նայեցէք ձեր խմբապետին, տեսնելու համար թէ՛ ինչպէս գործ կը վարէ, որպէսզի դուք ալ հետզհետէ փորձառութիւն և հեռատեսութիւն ձեռք բերէք:

Ի հարկէ ժողովուրդին մէջէն բարեկամներ կունենաք. ձեր ման եկած ժամանակ միշտ զանոնք հարց ու

փորձ ըրէք: Երբ որեւէ վտանգատու լուր մը լսէք ընդհանուր գործին կամ խումբին վերաբերեալ, անմիջապէս յայտնեցէք ձեր խմբապետին կամ տասնապետներուն: Եթէ նոյնիսկ այդ պատմածը սուտ ալ ըլլայ, յայտնեցէք ձեր պետերուն. անոնք այդ հարցը կը քննեն մանրամասնութեամբ և պէտք եղած զգուշութիւնները կ'ընեն:

ՁԼՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՆԸՄՔ.— 1. Երբ ճամբորդութենէ մը հասաք ձեր բնակած տեղերը՝ ձեր մոսիսին մէջէն փամփուշտները դատարկեցէք: Բերդանի կամ որեւէ փամփուշտ առնող ուրիշ հրացանի մէջ երբէք փամփուշտ չի դնէք, ուր որ ըլլայ՝ վտանգ պատահած ժամանակ շատ դժուար չէ փամփուշտ դնելը: Ձեր բնակած տեղը հասնելուդ պէս՝ բոլոր հրացանները դատարկելէ ետք, նաև շատ լաւ մաքրեցէք և զատուորներն ալ կախեցէք, որպէսզի զսպանակները (պրուփինները) չի թուլանան:

2. Հրացանները մաքրած և փամփուշտները մէջը փորձած ժամանակնիդ՝ դատարակ ըլլայ հրացանը թէ լեցուն՝ պէտք է սովորութիւն ընէք բերանը զէպի վեր բռնել: Եթէ ընկեր մը, նոյնիսկ դատարակ հրացանին բերանը ընկերոջ մը ուղղէ կամ ժողովուրդին — խիստ յանդիմանելու, մինչև անգամ պատժելու է: Դժբաղդութիւնը չի պատահած ատեն՝ խօսել ու հրահանգել, եթէ ոչ՝ երբ ընկեր մը կամ ժողովուրդէն անհատ մը վիրաւորեցաւ ու սպանեցաւ, կուզէք փոխարէնը սպանեցէք այն ընկերը, որուն ձեռքէն բացեցաւ կրակը — ինչ օգուտ: Այս կէտը լաւ ականջնիդ պահեցէք: Ընկերասպան մը մինչև վերջին շունչը պէտք է խզուով տանջի՝ եթէ զգացումի տէր է:

3. Խաղաղ ժամանակ՝ բարակ թոկի վրայ անցուցէք

լաթ մը և հրացանները անպէս մաքրեցէք, իսկ կուրի ժամանակ՝ շիշով մաքրեցէք: Բայց փամփուշտ դրած տեղը խիստ զգուշութեամբ մաքրելու է. երբ մագաչափ վիրաւորես այդ տեղը՝ կրակած ժամանակ փամփուշտը վիրաւոր դուրս կը հանէ, մինչև անգամ կարող է փամփուշտը կոտրել: Այս կէտը լաւ մտքերնիդ պահեցէք: Կըսէք թէ՛՝ „Հրացանս աւրուաւ. լաւը չէ“, չէք ըսեր թէ՛՝ „Մենք աւրեցինք“ :

4. Հրացանները քանդած և սարքած ժամանակնիդ՝ զգուշացէք որ քանդիչի քթով չի վիրաւորէք վինդերու գլուխները: Վինդ քանդելու համար՝ նախ քանդիչին բերանը լաւ պէտք է ըլլայ. յետոյ՝ թէ քանդած և թէ սարքած ժամանակ երբ քանդիչը վինդի գլխուն անցուցիր, պէտք է ձեռքդ ուղիղ պահես և թևդ ամուր, որ քանդիչն պարապ չի դառնայ:

5. Երբեմն կը գլորիք ցեխոտ կամ հողոտ տեղեր, հրացաններուդ քիթը կը մտնայ ցեխի կամ հողի մէջ՝ պէտք է նայիք ու մաքրէք, եթէ ոչ՝ բան մը կը պատահի և կրակած պահուն հրացանի խողովակը կը պայթի: Երբեմն ալ ձմեռը լաթ կանցնէք հրացանի բերանը և կը մոռանաք. այդ ալ վտանգաւոր է:

6. Զմեռ ժամանակ ձեր հրացաններու գատուորներուն վրայ մուշամպայէ կտորներով ծածկոյթ շինեցէք, անցուցէք վրան և կոճակներով կոճկեցէք. բայց ո՛չ բոլորդ: Խմբի առջևէն գացող չորս հոգիները պէտք չէ անցնեն այդ ծածկոյթը և հրացաններու բերանը պէտք չէ լաթով գոցեն. տեսար յանկարծ թշնամի պատահեցաւ՝ առաջին կրակը միշտ պէտք է ձեզմէ բացի թշնամիին վրայ:

7. Քովերնիդ պատրաստ ունեցէք հրացանի աւելորդ մանր մասերէն: Իզամաններն ալ միշտ լեցուն և հրացան մաքրելու շորը պատրաստ ըլլալու են:

8. Ամառը եթէ ոգնի պատահի՝ անոր իւրը առէք

և պահեցէք ձմեռուան համար: Հրացանի սիրմէներուն (զաղւոր) ոգնու իւղը քսելուն պէս՝ մեքենայի նման կը բանի. ասիկա փորձուած է: Ոգնու իւղի հետ խառնեցէք քիչ մըն ալ կազի իւղ: Միւս իւղերը հրացանի զաղւորը կը պաղեցնեն, որ շատ դժւարութեամբ կը բանի:

9. Ամենքնիդ ալ, պարտաւոր էք փամփուշտ լեցնելը շատ լաւ սորվիլ:

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

1. ԼՈՒՍԻՆ ԳԻՇՆԵՐԸ.— Լուսնակ գիշերները ձեր հըրացանները ուսերնուդ չի գնէք, որ չի փայլին. կամ բռնեցէք կողքերնուդ և փայտի կողմնըրէք դէպի լուսինը, կամ թէ գրկեցէք և այնպէս տարէք: Իսկ դուք ալ հագէք ճերմակ վարտիկ մը և ճերմակ երկար շապիկ մը՝ վարտիկին վրայ թողնած. լուսնի լոյսով ճերմակը շատ չի երևար, մինդեռ սևը շատ շուտ կը նկատուի, որով թշնամին կրնայ նշան առնել ձեզի: Մութ ժամանակ երբ ճամբորդէք, սև լաթեր հագէք:
2. ԿՐԸԿ՝ ԳԻՇՆԵՐ ԺԸՄԸՆԸԿ.— Ուր որ ալ ըլլաք, գիշերը կրակ չի վառէք, մանաւանդ սարերու գագաթը: Կը պատահի որ լուսաբացին կը հասնիք որևէ տեղ մը, ամբողջ լաթերնիդ թրջած կ'ըլլայ քրտինքէն, գլուխներէդ գոլորշին կելնէ, նստելնուդ պէս կը սկսիք դողալ: Եթէ փոխելու շապիկ ունիք՝ փոխեցէք, բայց ո՛չ ամենքդ մէկանց. մաս-մաս հանեցէք և փոխեցէք ձեր շապիկները: Երբ արևը ծագեցաւ և կրակի պէտք ունիք, չոր փայտով կրակ ըրէք, որպէսզի ծուխը չերևայ:
3. ԸՆՏԸՈՒՒ ՄԷՁ.— Փոքր տարածութիւն ունեցող անտառի մէջ չի մտնէք պահելու: Մեծ տարածութիւն ունեցող անտառի մէջ պահելու երբեք առանց հարա-հրոցի: Կարող է պատահիլ, որ ձեր

մտած անտառը գան խուզարկեն. բայց խուզարկողները ներս չեն մտներ, կը վախենան, հետևաբար վարպետութեան կը դիմեն — քանի մը հրացան կը պայթեցնեն և իրարու կը պօռան թէ՛ „Այստեղ են, այստեղ, հայ, փախան... : Չըլլայ որ խաբւիք ու ձեր տեղէն շարժիք. ներսէն դուրս կը տեսնուի, բայց դուրսէն ներս չի տեսնուիր: Եթէ մինչև անգամ մատնութիւն եղած ըլլայ՝ մի վախնաք, թշնամին հազարաւոր ալ եղած ըլլայ, չի կրնայ ներս մտնել: Իրարմէ շատ հեռու-հեռու մի նստիք. ձեր նստած տեղերը քիչ մը փորեցէք, ցածցուցէք՝ դիրքի համար: Անտառ մտած ժամանակնիդ ալ ոտքի հետքեր չի թողուք:

4. ԳԻՒՂԷՆ ԼԵՅ ԼՈՒՆԵԼՈՒ ԸՏԵՆ.— Գիւղէն վստահելի անձերու կը պատուիրես և տեղ մը կ'որոշես որ, խումբին հաց բերեն: Որոշած տեղէնք երկու հարիւր քայլ հեռուն երկու զինուոր կը թողուս, որ սպասեն հաց բերողին, իսկ դուն ամբողջ խումբը կը հեռացնես երկու-երեք հազար քայլ՝ զիրքաւոր տեղ մը և կը տեղաւորես: Երբ գիւղացիք հացը բերին որոշած տեղը, այն երկու զինուորները կ'առնեն և կը բերեն ձեզ մօտ: Զեզի հաց բերող գիւղացիները պէտք է մնան՝ մինչև որ կէսօրն անցնի: Իսկ եթէ նոյն ժամանակ խուզարկութիւն կայ և ձեր մօտակայ տեղերը զօրք են հաւաքած, այն ատեն հաց բերողները թող ձեզի մօտ մնան մինչև իրիկուն: Երբ իրիկունը զանոնք զրկես գիւղ, մութը գալուն պէս ինքդ ալ խումբով փոխադրուէ ուրիշ յարմար տեղ մը, առանց հետքդ ցոյց տալու կամ նշան թողելու:

5. ԳԻՒՂԷՆ ՄԵՎՆԸՎ ԸՏԵՆ.— Որեւէ գիւղ, օրինակ կը մնաս երկու օր և կ'ուզես այդ իրիկունը դուրս գալ, բայց այնպիսի գործ մը կը պա-

տահի, որ ստիպւած կըլլաս օր մըն ալ մնալ: Մնացած տեղդ ալ հարիւր տնւոր է և ամբողջ գիւղը իմացած է քու այդտեղ ըլլալդ: Բնչ պէտք է ընես:—Երբ երկու օրը լրանայ, կանչէ՛ գիւղէն քանի մը յայտնի մարդիկ, խօսիր, խրախուսէ և ժամը չորսի ժամանակ դուրս եկուր գիւղէ, բոլորը կը տեսնեն որ դուն քու խմբովդ գացիր ուրիշ տեղ մը: Գիւղէն քառորդ ժամ մը հեռանալէ ետք, յարմար տեղ մը նստիր: Նախ քան գիւղէն հեռանալը՝ տեղական երեք հաւատարիմ տասնապետներու կ'ըսես՝ „Վերագառնալով՝ ես ձեր տուները պիտի մնամ կամ ձեր մարագները, ձեզմէ՛ գատ ուրիշ ո՛չ ոք պէտք չէ իմանայ : Անոնք ձեզի համար տեղ կը պատրաստեն և շները ներս կ'առնեն: Դուք գիւղի եզերքը նստած տեղերնիդ կը մնաք կէս ժամ կամ մէկ ժամ, յետոյ կը դառնաք նորէն նոյն գիւղը ու կը մնաք ձեր ամենավստահելի մարդոց տուները: Հետեւալ օրը գործդ կը տեսնես ու կը հեռանաս:

Առհասարակ գիւղէ մը ուրիշ գիւղ երթալու ժամանակ, եթէ արևելք պիտի քալես գիւղէն դուրս ելլելով նախ գնա՛ դէպի արևմուտք և ապա դարձիւր արևելք, որպէս զի գիւղացիք չի տեսնան թէ ո՛ւր կ'երթաս: Երթալիք իսկական տեղը իմացուր միայն գիւղի խմբապետին, անկէ՛ գատ ուրիշ մարդ թող չ'իմանայ: Իմացուր նաև քու գաղտնապահ լրտեսիդ: Աստոց ալ յայտնելուդ պատճառն այն է, որ եթէ միւս օրը բան մը իմանան՝ անմիջապէս քեզի լուր տան:

6. ՋՐԵՐՆ ԸՆՅՆԵԼՈՒ ԸՏԵՆ.— Խուժըը ջրերէն անցած ատեն՝ ամէնքը մէկէն ջրի եզերքը գալու չեն: Երկու հոգի թող հանւին, իսկ չորսը նըստին եզերքը: Առաջին հանուղները ջրին վարժ ըլլալու են, որոնք արագ կերպով գետին միւս կողմը անցնելով՝ նայեն չորս կողմերնին և շուտով լաթերնին հագնին ու

աւելի՛ հեռուները դիտեն: Եթէ քար կայ — նստին քարերու ետև, եթէ բուլ (թուփ) կայ — բուլերու մէջ նստին և սուլեն: Ջրին միւս ափը գտնւած չորսն արդէն պատրաստ են՝ կ'անցնին. անոնց ետևէն ալ կ'անցնի խումբը: Ջուրերէն անցնելու գործը արագ պէտք է կատարէք: Եթէ ջուրը քիչ է, իրար շալկեցէք, որ շուտ անցնիք: Փամփուշտ չի թափէք այդ տեղ: Եթէ գետի եզերքն աւազուտ է, մէկ քայլի վրայ քալեցէք, որ ոտքերնուդ հետքերը շատ չերևին:

7. ԿԻՐՃԵՐՆ ԸՆՑՆԵԼՈՒ ԸՏԵՆ.— Խումբը առ հասարակ կիրճերը չի մտցնել՝ երբ երկու կողմի սարերը շատ անառիկ և բարձր են: Իսկ եթէ հարկ կայ անպատճառ կիրճէն անցնելու, այն առեն չորս կամ վեց տղայ՝ լեցուցած հրացանները ձեռքերնին, թող արագօրէն կիրճին մէջէն անցնին միւս կողմը: Երբ տեսաք որ ոչինչ չի պատահեցաւ և նկատեցիք որ անցած են, խումբը ցրած կազմով անցնելու է կիրճէն: Եթէ աչքի առաջ ունիս որ, օրինակ, դաւադրութիւն մը եղած է և թշնամին դիրք բռնած՝ առաջքդ կը սպասէ, առջևէն միշտ զրկէ երկու կամ երեք գինտր, որոնք շատ լաւ ծանօթ ըլլան այդ տեղերուն և միաժամանակ ճարպիկ. դուն ալ խումբին հետ 50–60 քայլ ետևէն գնա՛:

8. ԳԻՒՂ ՄՏՆԵԼՈՒ ԸՏԵՆ.— Եթէ գիւղէ մը պիտի փոխադրուիս ուրիշ գիւղ մը, իրիկւան մօտ լուր տուր եթալիք գիւղիդ խմբապետին. անիկայ իր գիւղը գտնւած տեղական զինւորներով գիւղի շուները ներս կ'առնէ, որպէսզի չի հաջնեն ձեր վրայ և նոպատարն ալ (պահապան) կերպով մը կը խաբէ և կը տանի հակիթ, մածուն կերցնելու և ձեր տեղերը կորոշէ: Գացածիդ պէս՝ տասնեակ-տասնեակ կը

ցրւես որոշած տեղերը: Եթէ տեղ մը անյարմար է, փոխել կուտաս, իսկ եթէ տեսնես որ պահապանները առ հասարակ վնասակար են ձեզի համար, կը յայտարարես որ հեռանան գիւղէն. անոնք իսկոյն կը հեռանան:

9. ԳԻՒՂԻՆ ՄԷՁ.— Ինչ գիւղի մէջ ալ ըլլայ խումբդ — տասնեակ-տասնեակ կը ցրւես զանոնք հոն:

Եթէ մէկ տասնեակ ունիս, դարձեալ երեք տեղով պէտք է նստին և նստած տներու դռները իրարու դիմաց գտնւին, որպէս զի զիրար պահեն. երբ պատահամք կամ մատնութեամբ պաշարւին — միւսները անմիջապէս դուրս կուգան և կը զարնեն՝ պաշարած ընկերներն ազատելով: Իսկ եթէ մէկ տեղով նստիք և պաշարւիք, թշնամին իր հետ պատրաստ ունի կազի իւրը, ձեր տան բոլորը խոտ կը լեցնէ և կազի իւր թափելով տան վրայ՝ ձեզ կրակի մէջ կը թողու:

10. ԿԸՄՈՒՐՁ ԸՆՅՆԵՂՈՒ ԸՏԵՆ.— Թուրք զօրքերը երբեմն կամուրջները կը պահեն: Երբ մօտեցար կամուրջին՝ չորս մարդ զրկէ քիչ մը առաջ. այդ չորսը թող նայեն բոլորտիքը ու կամուրջի տակը, իրենց հրացանները լեցուցած՝ պատրաստ վիճակի մէջ: Յետոյ կամուրջի վրայէն չորս հոգի կ'երթան՝ իրարմէ անջատուած: Եթէ միւս գլուխը մարդ ըլլայ՝ կը հարցնեն այդ չորսին — „Ո՞վ էք : Թող պատասխանեն — „Ջինուորներ ենք, դուրս ելէք ճամբայէն, Մէհմէդ չաուշ, կամ Հասան չաուշ, վուրմա և այլն ըսելով: Կամուրջի վրայ գացողները ծեղով գաղտնի թող երթան և երբ մօտեցան միւս գլխուն՝ արագ-արագ վազեն անցնին: Եթէ գիւղացի մարդիկ ունիս հետդ՝ անոնք թող առաջ անցնին: Կարելի է նաև կամուրջին շրջակայ գիւղերէն ուրիշ մարդու միջոցով հարցնել թէ՛

կը պահեն կամուրջը և կամ քանի՞ հոգիով և այլն, և ըստ այնմ որոշեցէք ընելիքնիդ:

11. ՓՈՇԻՈՏ ՃԼՆԵՊԱՐՀԻՆ.— Երբ փոշիոտ, նեղ ճանապարհով կ'երթաք, խումբի վերջապահները ծառի կանաչ ճիւղ մը թող կտրեն և իրենց ետևէն քաշեն, որ հետքերը կորսին:

12. ԴԻՐՔ ԶԵՂԸՆՍԵՂ.— Այն տեղ՝ ուր դիրք չի կայ — խումբով չի պիտի նստիլ ծխելու կամ հանգստանալու, չի պիտի թողնել որ ոտքի ձայն հանեն ու բարձր ձայնով խօսին կամ հազան:

13. ՀՈՎԻՏՆԵՐԸ ԶԻ ՄՆԵԼ.— Առ հասարակ հովիտներ* չի մնաք հանգստանալու, ըսելով թէ՛ «Սարի գագաթը ջուր չի կայ, հով չի կայ, երթանք արևուն տակ խաշի՞նք : Եթէ կուզես խումբը չի վտանգել, պէտք է սարի գագաթը մնաս: Ջրի համար յատուկ տիկեր կան, խումբը թող երկու հատ հետն ունենայ կարգով կ'երթաք, ջուր կը բերէք և կը խմէք: Եթէ սարի գագաթը ըլլաս՝ չորս կողմդ թէ՛ աչքով և թէ՛ դիտակով կը տեսնես, յանկարծակիի չես գար. իսկ եթէ հովիտի մէջ պաշարւիս թշնամիներով — բոլորդ ալ կը կոտորւիք, առանց մէկ թշնամիի քիթ արունելու: Իսկ եթէ սարի գագաթը պահապան դնես և դուն հովիտը մնաս և պահապանները քեզ լուր տան թէ՛ թշնամի կերևայ, դուն պէտք է արագօրէն բարձրանաս սարի գագաթը: Աւելի լաւ է միշտ բարձր տեղեր մնալ:

14. ԽՈՒՄԲԵՐԸ ԳՆՐՈՒՆ ԺԼՄԵՆԵԿ.— Գարուն ժամանակ ջանա՛ դաշտը մարդ չի զրկել, եթէ զրկես ալ՝ սարի ստորոտները զրկէ և շուտով

* Հովիտ՝ Սասնոյ լեզուով, ձոր կը նշանակէ:

վերադարձնել տ՛ո՛ւր: Ինչ որ գործ ունիս՝ տեղացի ժողովուրդին ձեռքով ընել տո՛ւր: Պատճառն այն է, որ գարունը շատ ցեխ ու ջուր է դաշտը, և գետերէն տոփերով անց ու դարձ կընեն: Կառավարութիւնը այդ տոփերի վրայ ալ քիւրդ հսկողներ կը դնէ ձեզի համար: Եթէ բան մը պատահի զինուորներուդ՝ շատ դժարութեամբ կ'ազատին. օրինակ, չորս ժամայ ճանապարհը ութ ժամէն հազիւ կարող են երթալ և երկրորդ օրը հետքերնին շատ լաւ կը տեսնուի, որով շուտ կը հասկըցւի տեղերնին և կռիւր կը կրկնուի:

15. ՏԵՂՄՓՈՒՍՈՒԹԻՒՆ ՉՄԵՌԸ.— Երբ ձմեռ ժամանակ դաշտին մէջ կռիւ ունենաս, իրիկունը անցիր սարի ստորոտը գտնւած այն գիւղը՝ որ լաւ դիրք ունի: Երբ տեսնես, որ սարը բուք է և անկարող ես անցնիլ, մնացի՛ր տեղդ, աւելի լաւ է կռիլ, քան թէ բոլոր զինուորները տանել սարը և խեղդել:

Սարէն անցնելու ճամբայ չ'եղած ատեն, գիւղէն քանի մը տղայ վերցուր լաքաններով: Լաքանները փայտէ գործիքներ են, շինւած ոտքերու համար, որոնք ձիւնի մէջ չեն խրիւր. անոնց հետքով դուք հանգիստ կերթաք: Եթէ այդպէս չընէք չէք կրնար երթալ, մինչև մէջքերնիդ ձիւնի մէջ կը խրիք, կարող էք նաև ձիւնի հլուսի տակ մնալ և բոլորդ ալ խեղդել: Սարի կողերով կամ հովիտներով անցած ատեննիդ՝ ամբողջ սարի ձիւնը կը կտորի և ձեզ կը լեցնէ հովիտը, կը սպաննէ:

Չմեռ ժամանակ առ հասարակ հետերնիդ ունեցէք նաճախներ (տապար), որոնք գէնքի տեղ ալ կարելի է գործածել. երբ ձիւնը սառած ըլլայ, ոտքերնիդ չի բռներ, կը սահիք և կերթաք անդունդ մը. այն ատեն այդ նաճախով առջևէն գացողը կը կտորէ սառույց դարձած ձիւնը և ոտնատեղեր կը շինէ ու դուք հանգիստ

կը քալէք: Հրացաններու կոթերը ձիւնին չը զարնէք հետք կը թողու և դուք ձեզ կը մատնէք:

16. ՉԻՆ՝ ԽՈՒՄԻՒ ՀԵՏ.— Խմբապետ, եթէ խումբիդ հետ ձի կը գտնուի և ճանապարհ պիտի երթաս 8 կամ 10 ժամ, դուն պէտք չէ որ ձի նստիս. աւելի տկար ընկերները թող նստին: Զինուորները քեզ յարգելու համար կ'ըսեն. „Ելիր, նստէ ձիուն , բայց դուն լսելու չես անոնց, որ իրաւունք ունենաս քու քայլովդ քալեցնելու զինուորները և չի լուսացած՝ տեղ հասնես: Եթէ նստիս՝ զինուորները մտքերովնին կ'ըսեն „Ինքը նստեր է ձիուն և անխզօրէն մեզ կը հրամայէ քալել : Եթէ չի քալեցնես ու ինքզ ալ չի քալես՝ կը մնաս քրդերու մէջ, կամ արևը կը ծագի և ամէն մարդ կը տեսնէ ձեզ. շատ կարելի է այդտեղ զիրք ալ չունենաս և չի քալելու պատճառով խումբը վտանգես: Եթէ այդ ճանապարհին մնայու յարմար տեղ ունիս՝ մնա՛, շատ մի՛ նեղիր խումբը: Շատ կարելի է 8 կամ 10 ժամ քալելէն վերջ հասնիք որոշած տեղերնիդ, բայց լուսաբացին ձեզ ճամբորդներ կը տեսնեն և լուր կուտան կառավարութեան: Կառավարութիւնը գորք կը զրկէ ձեր վրայ և դուք յոգնած, ջարդ ու փշուր եղած՝ անքուն, կուի կը բռնիք ու չէք կրնար շարժել և կռիւէն վերջ, երկրորդ գիշերը նորէն պիտի քալէք՝ որոշած տեղն հասնելու համար, որովհետև եթէ հոն մնաք՝ բոլորդ ալ կոչնչացնեն:

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ԾՊՏԻՆԸ ՇՐՋԱՆԵՐ.— Այն տեղերը և շրջանները՝ ուր երկար ժամանակ գործ ունեցած ենք, երբ որևէ ինտելիգենտ ընկեր ծպտուած ման գայ,

շուտով կը ձերբակալւի. օրինակ՝ հինգ տարեկան քուրդ լամուկ մը երբ տեսնայ՝ կը հարցաքննէ և կ'ըսէ. «Աէ ֆլլայէ ջան ֆիդան պու : Իսկ այն շրջանները՝ ուր յեղափոխութիւն չէ եղած, կարող են ծպտուած ման գալ և երկիրը ուսումնասիրել, կազմակերպել փոքրիկ խմբեր և ասով հող պատրաստել:

2. **ԶԳՈՒՇՆՆԵՐԻ ԹՈՒՆՆԻՈՐԻՆԵՒԷ.**— Առհասարակ ըզ-
գուշացիր քու ժողովուրդէդ: Երբ մէկ քանի
կռիւներու մէջ յաջողութիւն ունենաս՝ կառա-
վարութիւնը կը դիմէ հետևեալ փորձին.— լրտեսներու
միջոցով կ'աշխատի քեզ, խմբապետ, կամ քեզի հետ
նաև ամբողջ խումբդ թունաւորել, և յետոյ՝ նոյն լըր-
տեսներու միջոցով յարձակել ձեր վրայ: Ամէն տեղ
զգուշացիր հաց կերած ատենդ, ինչպէս նաև մասնաւոր
մարդոցմէ նւէր զրկուած ուտելիքներէն, ըմպելիքներէն
և ծխելիքներէն: Մինչև որ իսկութիւնը չիմանաս, ոչ
դո՛ւն կեր, և ոչ ընկերներուդ թող որ ուտեն:

3. **ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ԼՐՏԵՄՆԵՐԷՆ.**— Այն անձերէն կամ
անհատներէն, որոնք չէք ճանչնար, որոնք ձեր
սահմաններէն դուրս գտնուած մարդիկ են —
զգուշացէք. անոնց ներկայութեան չերևիք: Եթէ տես-
նէն ձեզ, իսկոյն բռնեցէք և պահեցէք քովերնիդ. հար-
ցուցէք թէ ո՞ր տեղացի են, ի՞նչ է անունին, ազգա-
նունին և այլն: Եթէ տեղացիներ ճանչնան ու ձեզ
վստահեցնեն — բաց թողէք: Կառավարութիւնը երբեմն
մարդիկ կը զրկէ մուրացկանի ձևով. դուք ալ կը խրդ-
ճաք և «մուրացկան հայ մըն է ըսելով՝ ազատ կը թո-
ղուք. ան ալ կ'երթայ տեսածը կը պատմէ: Երբեմն ալ
ոչխար, տաւար գնողներ կը զրկէ. եթէ անձանօթ են,
անոնց ալ չի հաւատար:

ԿՈՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. ԳԻՐՔԵՐ.— Փոքրիկ խմբերը պէտք է ղրկես այն գիւղերը, որոնք սարի ստորոտները կը գտնուին և լաւ գիրքեր ունին: Երբ իրիկունը գիւղ հասնին՝ անմիջապէս տասնապետները նայելու են գիրքերը, և պէտք եղած տեղերը՝ գաղտնի կերպով գիրքեր շինել տալու են տեղական պահեստի զինւորներուն ձեռքով, անյպէս որ գիւղացիք չիմանան: Ամէն անգամ առաջուց պէտք է որոշել թէ՛ ո՞ր զինւորը ո՞ր գիրքը պիտի պահէ: Եթէ այս կանխագգուշուիթիւնները չընեն՝ թշնամին մատնութեամբ կամ խուզարկութեան համար լուսադէմին կուգայ, գիւղին բոլոր գիրքերը կը բռնէ, և յանկարծակի կը յարձակի ձեր վրայ:

2. ԳՆՇՏԻ ՎԲՆՅ.— Դաշտի գիւղերը գտնուած ժամանակդ՝ տեղացի զինւորներուն հետ պէտք եղած տեղերը հողէ գիրքեր շինել տուր: Դաշտի գիւղերը առհասարակ գիրքեր չեն ունենար: Եթէ գիւղի շրջականները ծառեր կան՝ գիրքերդ ծառերէն դուրս շինել տուր, որ թշնամին այդ ծառերը քեզմէ չառնէ: Երբ այդպէս չընես, իրիկունը դուրս եկած ժամանակդ շատ մարդ զոհ կուտաս: Եթէ գիւղը եկեղեցի ունի, նախօրօք սանդուխը պատրաստէ, որ եկեղեցիին տանիքը բարձրանաս ու գիրք շինել տաս. այսպէսով քու հրացաններդ թշնամիին վրայ կախուած կըլլան: Թնդանօթի դէմ հողէ գիրքեր ունեցիր, խրամատներ

(խէնտակ) փորել տուր և առաջներդ հողէ թումբեր շինել տուր:

3. ՓՈՍԻ ՄԷՋ.— Եթէ գիւղը փոսի մէջ է, պէտք է չորս զինուոր և չորս ալ գիւղացի զրկես բլուրները, որ, պահեն ու նայեն չորսոյին: Պառկած տեղդ դրանն առջև ալ պահապան մը ունեցիր: Լոյսը բացելուն պէս, երբ կը տեսնես որ բան մը չի պատահեցաւ, եթէ գիւղը հաւատարիմ մարդ ունիս՝ զրկէ բլուրները, որ այն չորսին հետ հսկեն թշնամիին շարժումները և երկուքը անմիջապէս գան լուր տան քեզի: Մնացածները թող սպասեն բլուրներուն վրայ և եթէ թշնամին դէպի գիւղը գալու ըլլայ՝ նորէն լուր տան քեզի:

Եթէ գիւղի եզերքները գիւղէն աւելի բարձր լեռներ կան՝ քեզմէ 200-1000 քայլ հեռու, մարդ զրկէ հոն ալ, իսկ եթէ աւելի հեռուն ըլլայ՝ մի զրկեր, գիւղը մնացիր: Նայելով քու քովդ գտնուած զինուորներու քանակութեանը՝ թէ կրնաս գիւղն ու բլուրները պահել միասին — լա՛ւ. իսկ եթէ տեսնաս որ գիւղին զիրքն անյարմար է և դուն ալ այնքան ուժ չունիս որ գիւղն ու բլուրները կարենաս պահել, այն ժամանակ հաց ու ջուր առնելու ես հետդ և բլուրները տանելով՝ հոն զիրք բռնելու ես, որովհետև երբ գիւղը թողուս պաշարդ՝ թշնամին կուգայ թէ հացը կ'առնէ և թէ ջուրը:

4. ՊԵՆՏՊԵՆՆԵՐ.— Որեւէ գիւղ մնացած ատենդ, պէտք է պահապաններ դնես քու զինուորներէդ: Գիւղի ժողովուրդը որպէս թէ ձեր վրայ ցաւելով կ'ըսէ. „Դուք քնեցէք, մենք կը պահենք : Բայց չըլլայ, չըլլայ թէ վստահիս. պահապանը քու խումբէդ

պէտք է ըլլայ և մնացած զինւորներն ալ առանց „պատրոնտաշները մէջքերէն քակելու՝ պառկելու են:

Խմբապետն ու տասնապետները առաւօտեան զէմ պէտք է վեր կենան և պահապան կանգնին: Եթէ խումբը մեծ է, տասնապետները կարգով պահապանութիւն ընելու են, զինւորներուն վրայ հսկելու, ներսը պառկածներուն նայելու են:

Թէ ապահով և թէ վտանգաւոր տեղեր՝ պահապաններուդ վրայ միշտ լրաբեր ունեցիր, որպէս զի երբ տեսնէ թէ որեւիցէ պահապան քնացած է՝ գայ տասնապետին կամ խմբապետին լուր տայ: Այս վերջինները երթալու և իրենց աչքերով տեսնելու են թէ՛ իրօք նոյն պահապանը քնացած է թէ արթուն: Եթէ քնացած է, անմիջապէս զինաթափ ընելու է զայն՝ մինչև որ Զինւորական Խորհուրդը տայ արժանի ու խիստ որոշումը: Եթէ զինւոր մը հիւանդ է զայն պահապան նշանակելու չէ:

5. ՓԼՄՓՈՒՇՏ ԽՆԸՅԵԼ.— Առհասարակ ամէն զինւոր ունենալու է 300 – 350 փամփուշտ: Տասնըհինգ տարւան ընթացքին մէջ տեղի ունեցած մեր բոլոր կռիւները՝ հարիւրին իննսուն՝ քիւրդերու հետ եղած է: Մինչև կէս օրը՝ անոնք կը զբաղեցնեն ձեզ – առաջ կուգան, ետ կը փախչին և դեռ ուրիշ զանազան ձևերու կը դիմեն: Դուք առանց մտածելու, ոգևորւած, աջ ու ձախ կը կրակէք: Ժամ մը կուելէ ետք, կը տեսնես որ մէկ պատրոնտաշդ պարպւեր է: Հապա եթէ մինչև իրիկուն այս ձևով զարնես՝ քանի՞ պատրոնտաշ փամփուշտ պիտի տրւի քեզի, որ կրակես անխնայ, առանց մտածելու՝ թէ կէսօրէն վերջ այդ չափ քիւրդ և երկու վաշտի չափ ալ զօրք պիտի գան ձեր զէմ կուելու: Քովդ փամփուշտի բեռներ ալ ըլլայ՝ նորէն պէտք է խնայես: Գիտեցիր որ ամէն մէկ փամ-

փուշտը քու թանկագին կեանքդ պիտի փրկէ: Եթէ միայն այդ օրը ըլլայ կոխը, լա՛ւ, բոլորը զարնենք և իրիկունը վերագառանանք: Բայց ընելիքնիդ մէկ կոխ չէ. դեռ շատ կոխներ պիտի ունենաք թշնամիին հետ, երկար ժամանակ երկրի խորերուն կուրծք պիտի տաք անոր:

Պէտք է խնայել փամփուշտը:

Կը պատահի որ կուի ժամանակ 1000 փամփուշտ կը սպաննէ 10 թշնամի, ատեն ալ կ'ըլլայ որ, 100 փամփուշտը 20 թշնամի կը սպաննէ: Ձեզի համար հիւանդութիւն ըլլալու չէ շատ փամփուշտ կրակելը:

Մասնաւոր կոխներու ժամանակ պէտք է աշխատիլ դատարկ կիլզիները լեցնել և անոնք կրակել թրշնամիին վրայ և իսկական փամփուշտները չի գործածել, այլ պահել աւելի մեծ կոխներու համար:

6. ՓԵՄՓՈՒՇՏԻ ՆԵՇԻՒԸ.— Ամէն կոխ վերջանալէ յետոյ, խմբապետը պէտք է առնէ զինուորներու վրայ գտնւած փամփուշտներուն հաշիւը և տեսնէ թէ իւրաքանչիւր զինուոր քանի՞ հատ վառեր է: Այն զիրքերէն, որոնց դէմ քիչ թշնամի կայ, քիչ փամփուշտ վառւած պէտք է ըլլայ շատ թշնամի եղած կողմէն միայն՝ շատ փամփուշտ:

7. ԿՈՒՒՆԵՐՈՒ ԺԵՄԸՆԵԿ.— Պէտք է մեծ ուշադրութեամբ լսել հրամանատարին և առանց անոր հրամանին՝ պարապ տեղը չի կրակել: Միշտ չորս կողմերնիդ նայելու և իրարու ցոյց տալու էք թշնամիին զանազան շարժումները: Երբ խմբապետը հրաման տուա զիրք մը ուրիշ զիրք փոխադրելու՝ կուշտերնիդ թշնամիին կողմը տալով, շատ արագ և ծուռ ու մուռ շարժումներով գնացէք ցոյց տւած զիրքը:

8. ԳԻՇՆԵՐԸՅՅԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՒՄ.— Երբ Երկրի մէջ խրմբիդ ձայնը ելաւ, գիշերները մարդ պատահած ժամանակ, դուն ինքզինքդ պէտք է զօրք կարծել տաս և գիմացիինն ջանֆիդայի տեղ ընդունես: Երբ գիշերը մարդ պատահեցաւ՝ անոնք ձայն կուտան թէ «Դուք ո՞վ էք : Դուք իսկոյն կը պատասխանէք՝ «Զօրք ենք : Անոնք կը շփոթին: Իսկ դուն առանց ժամանակ կորսնցնելու՝ հրամայէ ընկերներուդ՝ «Մէհմէդ չաուուշ, վուրուն ջանֆիդալարա : Անոնք բնականաբար կ'ըսեն. «Մենք ալ զօրք ենք : Դուն մտիկ մի՛ ըներ, քանի մը գալպ բաց վրանին ու հեռացիր: Զգուշացիր որ դէպի գնացած տեղդ հետք ցոյց չի տաս: Առաւօտ լուսանալուն պէս՝ կուգան այդտեղ կը նայեն, շատ կարելի է իրենցմէ երկու կամ երեք մարդ ալ սպանած ըլլայ. այնպէս մը պիտի կարգադրես որ յաջորդ օրը քեզ չի գտնան:

Եթէ պատահի որ գիշերը յանկարծ կրակ բացւի, շուտով պատասխանեցէք կրակով՝ դէպի կրակ բացւած տեղերը և ինկէք գետին ձեր փորերուն վրայ. բայց զգո՛յշ որ ետևնիդ մարդ չ'ըլլայ և ետևէն չի զարնեն ձեզի:

9. ԳԻՇՆԵՐԸՅՅԻՆ ՊԱՇՏԱՐՈՒՄ.— Եթէ գիւղին մէջ գիշերը պաշարիս, առաւօտուն դաշտի կողմէն յարձակում կ'ըլլայ վրադ. դուն՝ տեսնելով որ գիւղին ետևը լաւ դիրք ունեցող և մօտիկ սար կայ, կը մտածես երթալ, բայց չի խաբիս — թշնամին առաջ սարի դիրքերը կը գրաւէ, յետոյ դաշտէն կը յարձակի: Եթէ գիւղէն դուրս գաս, դաշտը գտնւած զօրքը գիւղ կը լեցւի և կը մնաս երկու կրակի մէջ — կարող են բոլորնիդ ալ կոտորել: Ուստի պէտք է գիւղը մնաս:

10. ԿՈՒՆԵԼՈՎ ՍԱՐ ԲԱՐՁՐԱՆԵԼ.— Եթէ կուողներդ քիչ էք, 8-10 հոգի, պէտք է այն գիւղէն, որտեղէն կուելով սար կը բարձրանաս՝ վերցնես հինգ-վեց հոգի, որոնք կուելէ աւելի մեծ օգուտ պիտի տան ձեզի: Հետեւերը կը դնես զինուոր մը, և անոնք իւրաքանչիւր երկու կամ երեք հարիւր քայլ հեռաւորութեան վրայ՝ զիրքեր կը շինեն և կը լրտեսեն թշնամիին եկած կողմերն ու քեզի լուր կու տան: Դուք մաս առ մաս կուելով՝ կը փոխադրուիք զիրքէ զիրք, արագ շարժելով և կուշտերնիդ ցոյց տալով թշնամուն: Չ'ըլլայ թէ ամբողջ մէջքերնիդ ցոյց տաք — այն ժամանակ աւելի մեծ կ'երևիք և զիւրին կը զարնուիք: Առհասարակ երբ մէկը ետևէն կը զարնուի, անոր զիակին վրայ կը թքնեն: Բայց անհրաժեշտ է ամէն զգուշութիւն ընել որ թշնամին առաջ չանցնի և ետևդ գտնուած զիրքերը չի գրաւէ:

11. ԵՏԵՒԻ ԴԻՐՔԵՐԸ.— Սարը բարձրացած ժամանակ, եթէ տեսնաս որ թշնամին ետևդ կտրեր է — նստիր զիրքաւոր տեղ մը: Տասը հոգի, եթէ փամփուշտ ունիք, բաւական էք 1000 կամ 1500-ին: Ի հարկէ պէտք է դուք փորձառու ըլլաք և քաջութեամբ կուողներ: Իրաւ է որ թշնամին մեծ քանակութեամբ եկած է, բայց անոնց մեծ մասին զնդակները ձեզ չեն հասնիր, մէկ մասինն ալ դէպի երկինք կերթայ, քիչերնունը միայն կ'իյնայ ձեր բոլորտիքը: Առանց շփոթելու՝ նայելու էք ձեր զիրքերուն: Եթէ ետևի կողմիդ թշնամիին զիրքը բարձր է, աշխատեցէք ետևի կողմերու զիրքերը բարձր շինել, որ պաշտպանութիւն այդ կողմէն: Առջևինները ձեզի չեն կրնար վնաս հասցնել:

12. ԹԻՒՐԻ ԵՒ ԲԻՒՐԳ ԿՈՒՈՂԻ ԽՈՐԱՄԱՆՆԵՐԻ ԿՆՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՈՒ.— Կոիւներու ժամանակ գինւորները ֆէսէրնին, իսկ քիւրգերը քոլոզնին կ'անցնեն հրացաններու ծայրը և կը խաղցնեն կամ կը դնեն քարերու կամ գիւղի պատերուն վրայ և կը խաբեն ձեզ, որպէսզի պարապ տեղը փամփոշտ վառէք: Չըլլայ թէ խարիք. գիտակով նայեցէք և յետոյ զարկէք՝ եթէ երևցողը իսկական գլուխ է:

Առհասարակ երբ անոնք յարձակին՝ սէլավաթ կուտան, մեծ հարայներ կ'ընեն և իրարու կ'ըսեն. «Հայ փախան, Հայ փախան, մէկգմէկ քաջալերելու համար: Աղմուկ, աղաղակ կը բարձրացնեն. ձայներնին երկինք գետինք կը լեցնէ. երբեմն շան պէս կը հաջնն, գայլի պէս կ'ոռնան, ամեն մէկէն մէկ-մէկ տեսակ ձայն կ'ելլէ, որպէս զի դուք շփոթիք: —Ոչ մէկ կարևորութիւն տալու էք. դուք լաւ զարնելնուդ նայեցէք, երբեմն դուք ալ հարա-հրոց ըրէք ու պոռացէք թշնամիին — «Ձեր գնդակները մեզի չեն հասնիր, մտայնէք կուինք :

Կուի սկիզբը թշնամին ձեզ կը փորձէ թէ որքան ուղիղ նշանառուներ էք: Առաջին համազարկերուն երբ մէկ քանին գլորեցիք, մէկ քանիսն ալ՝ ականջի տակերէն ձեր գնդակները անցնելով՝ ուշաթափւեցան, երբ գետնի փոշին երեսնուն լեցուցիք — այն ժամանակ սաստիկ կը դողան, գլուխնին դուրս չեն կրնար հանել: Իսկ եթէ ձեր գնդակները չի մտայնան իրենց, կամ շատ պակաս տին, կամ բարձրէն անցան՝ այն ատեն երբէք չեն վախնար, կը քաջալերին ըսելով, «Ասոնք կուողներ չեն :

Երբեմն ալ թշնամին հետեւալ խաբէութիւնը կը փորձէ: Դիրքերը նստած կը կուիք, յանկարծ թշնամի կողմէն ճարպիկ մը՝ կողքը կուտայ ձեր կողմը, երկու քայլ վազելով կ'երթայ և յանկարծ վար կ'իյնայ. դուք ալ կարծելով որ զարնւեցա՛ւ՝ կը բարձրանաք նայելու. այն

ժամանակ անոր միւս ընկերները ձեզ լաւ մը կը տեսնան ու անմիջապէս կը գարնեն: Մինչդեռ՝ անիկա գարնած չէր, այլ առաջ եկած էր ձեզ խաբելու համար. և ահա՛ նորէն վեր կը կենայ և կը մտնէ քարերուն ետևը: Այս ձևի խորամանկութիւններ գո՛րք ըրէք անոնց:

13. ԱՐԱԳ ԾՐԱԳԻՐ.— Խմբապետ, ենթադրենք որ գործնական ձեռնարկ մը պիտի ընես. լրտեսներդ եկան ու ամէն բան մանրամասնօրէն պատմեցին: Պէտք է երեք-չորս ժամէն այդ ձեռնարկը գործադրես. երբ գործի վայրը գնացիր, այդ երեք-չորս ժամայ ընթացքին մէջ կարող է այնտեղ աւելի ուժ եկած ըլլալ: Այս պարագային՝ գլխաւոր բանն այն է, որմէն ինչ արագ նկատողութեան առնես և առանց շփոթելու՝ բոլորական ծրագիր մը կազմես ու գործադրես, որպէսզի գոհ չի տաս:

14. ՅԱՏՈՒԿ ԽՄԲԵՐ.— Երբեմն կ'ըլլայ որ յատուկ նպատակով տասնեակներ կուղարկես դաշտ կամ որոշեալ տեղ մը. ընդհանրապէս քու ընելիք գործերդ զինուորները պէտք չէ իմանան: Որոշեցիք որ այս ինչ տասնապետները պիտի երթան իրենց տասնեակներով այդ ատեն զինուորներուն անունները կուտաս՝ ըսելով «Պատրաստեցէ՛ք : Երբ տասնեակները երկու ժամի չափ հեռանան, տասնապետները որոշ տեղ մը կը նստեցնեն զանոնք և իրենց ընելիք գործին մանրամասնութիւնները կը խօսին զինուորներուն ու կ'որոշեն իւրաքանչիւր զինուորի ընելիքը:

15. ԾՈՅՆ ԶԻՆՈՐԸ.— Կը տեսնես որ զինուոր մը կ'ըսէ՝ «Իմ ոտքս, փորս կը ցաւի, կամ հիւանդ եմ : Մինչդեռ այդ զինուորը մինչև գոր-

ծի երթալու րոպէն՝ կը խաղար և կը վազէր, ինչպէս եղաւ, որ յանկարծ հիւանդացաւ: Այդ տեսակ զինուորներուն ուշադրութեամբ հսկեցէք. եթէ երկու-երեք անգամ նոյնը կրկնեցին՝ հեռացուցէք խումբէն — ատոնք անձնագոհ զինուորներ չեն, այլ ժողովրդին մէջ իրենց գեղին փամփուշտները փայլեցնողներ:

16. ՅԱՏՏՈՒԿ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԹԻԻԸ.— Երբ մասնաւոր գործով մօտիկ տեղ մը խումբ պիտի զրկես և անոնց հրացաններու որոտը քեզի կրնայ հասնիլ, այն ժամանակ հինգ մարդ ալ բաւական է: Իսկ եթէ ութ կամ տասը ժամ հեռու է զրկելիք տեղը, նայելով զինուորներու փորձառութեան և ձեռնարկի լրջութեան՝ զրկէ 11, 13, 15, կամ 21 մարդ: Այս թիւէն պակաս չի զրկես. ահա՛ թէ ինչո՛ւ: —Որեւիցէ տեղ մը գէպք մը կը պատահի, հինգ կամ ութ հոգին չեն կրնար 50 — 100 կամ 300 տնւոր գիւղ մը պաշտպանել և իրարու ետեւէ պահել: Այն ժամանակ թշնամին գիւղին մէկ կողմէն ներս կը խուժէ և քանի մը զինուոր կամ գիւղացի սպաննելով կը քաջալերի ու կ'ըսէ. „Այսչափ ջանֆիդայի սպաննեցինք : Ուրեմն լաւ կը գործը և վերը յիշուած թիւերով խումբ զրկէ, որ թէ գիւղը կարողանան պահել, թէ իրարու ետեւերը և թէ յաջողութեամբ դուրս գան: Լուրջ գործի ժամանակ անփորձ զինուոր մի՛ գներ անոնց հետ, միւսներուն գործն ալ կը խանգարեն:

17. ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՆՅՈՂՆԵՐԸ.— Եթէ կոխն առաւտուն սկսի, այն հայերը՝ որոնք կը լսեն հրացաններու ձայնը, թող շուտով լուր տան միւս ընկերներուդ: Իսկ եթէ դուն մարդ գտար, անմիջապէս կը խրկես ընկերներուդ՝ որոշ պարօլայով և օգնութեան կը կանչես. ասոնք կուի լուրն առնելով՝ առանց

րոպէ կորսնցնելու՝ կուգան օգնութեան: Եթէ ազատ-
ւած ըլլաք — շուտով կը հասկնան, իսկ եթէ պաշար-
ւած՝ և հրացաններու ձայնը լսեն, թող օգնութեան
եկողները զարնեն կարևոր կէտի մը վրայ և թշնամին
շփոթեցնեն: Ասով պաշարածներու դրութիւնը կը թե-
թեանայ և հեշտութեամբ կ'ազատին:

18. ԽՄԲԸՊԵՏԸ ՍՊԸՆՆԻՆԸ.— Ընկերներ, գնդակը
ո՛չ խմբապետին կը խնայէ, ո՛չ ալ զինուորին:

Կուի մէջ մէյ մըն ալ յանկարծ տեսաք որ, ձեր
ղեկավար ուժը — խմբապետը — զոհեցաւ: Անմիջապէս՝
տասնապետներդ ձեր մէջէն ընտրեցէք խմբապետ մը և
շարունակեցէք գործը:

Յետոյ՝ երբ տեսնէք որ չունիք այն ղեկավար ուժը,
որ թէ հեռատեսութեամբ և թէ գործի մէջ կարենայ
ձեզ առաջնորդել՝ անմիջապէս գրեցէք դրսի կամ հար-
կան զինուորական խորհուրդին, որ ձեզի շուտով խմբա-
պետ մը հասցնէ: Եթէ չէք վստահիր ձեր մէջի ռազ-
մական մտաւոր ուժին, մինչև դուրսէն խմբապետ չի
գայ՝ պատասխանատու գործ չընէք: Իսկ եթէ ունիք
ձեր մէջ յարմար մէկը և ձայներու մեծամասնութեամբ
համաձայն էք — ընտրեցէք: Եթէ պատերազմական գրու-
թեան մէջ էք և կառավարութիւնը ձեզ կը հալածէ
ու դուք կոխը պէտք է շարունակէք — այն ժամանակ
ընդունելու էք որ խմբապետի օգնականը ձեզ ղեկա-
վարէ և այնպայման լսելու էք անոր: Այդ պարագանե-
րուն մէջ ձեր ընտրելին պէտք է ըլլայ խմբապետի
օգնականը: Իսկ երբ ան ալ զոհի, այն ատեն վերջը
գրւած ձեռով կը կարգադրէք ղեկավար ուժի խնդիրը:

19. ԸՆԿԸՐՈՂ ՏԸՄՆԸՊԵՏԸ.— Երբ զինուորները բա-
նաւոր պատճառներով գանգատեցան որևէ տաս-
նապետէ ու մեծամասնութիւն կազմեցին և փաս-

տերով ցոյց տւին, օրինակ, որ նա անկարող է զիրենք կառավարելու, զինւորական խորհուրդը, այսինքն խմբապետն ու տասնապետներն պէտք է քննեն և եթէ իրաւացի են զինւորները, այն ատեն խումբի բոլոր զինւորները, զինւորական խորհուրդի անդամներուն հետ միասին, քուէարկութեամբ կընտրեն նոր տասնապետ մը: Հրաժարեցուցւած տասնապետը ինքն ալ զգալով որ անկարող էր այդ պաշտօնը շարունակելու, ուրախութեամբ պէտք է դառնայ պարզ զինւոր:

20. ՅԱՋՈՂՈՒԹԵԼՆ ԸՌԱՋԻՆ ՀԵՏԵՒԵՆՔՆԵՐԸ.—

Երկրի մէջ մէկ քանի յաջողութիւն որ ունեցաք, գիւղերը շրջող հարկաւաքներն ու հաւու հակիթ ուտող ոստիկանները՝ թէ ձիւտը թէ ստաւը՝ իրիկունները հայերու գիւղերը չեն մնար ալ ևս. եթէ մնար ալ, թուով 30-40 հոգի պառկած սենեակներուն դռները ետեէն քարերով և գերաններով կ'ամրացնեն և տանիքին ծակերը գոցել կուտան ու քանի մը կարևոր հայեր ալ քովերնին կ'առնեն կը պահեն: Գրեթէ մինչև լոյս վախերնուն քուն ալ չեն քնանար:

Մէկ քանի յաջողութիւն ունենալու պարագային՝ պէտք է շրջակայ գտնուող քիւրդ ցեղերուն լուր զըրկես, ինչպէս նաև ջորեպաններուն, որ գիշերը ճամբորդութիւն չ'ընեն: Եթէ չի լսեցին և դարձեալ ճամբորդութիւն ըրին, գիտցիր որ վատ մտքով է — մարդ սպանելու կամ գողութիւն ընելու համար կը շրջեն: Բռնածո՞ք՝ առանց խիստ պատժի ենթարկելու՝ ազատ չի թողուս:

21. ԲԻՒՐԻ ՊԸ ՀԸՊԱՆՆԵՐԸ.— Երբ կառավարութիւնը իմանայ ձեր գործունէութեան մասին՝ գիւղերու մէջ քիւրդ պահապաններ կը դնէ, որոնց կ'ըսեն նորագար. ասոնց վարձքերը գիւղացիք կուտան: Այդ պահ

հապանները ձեզի համար կը գրին, որ երբ ներս մտնէք՝
լուր տան կառավարութեան: Գիւղերուն մէջ ասոնց
գտնելը լաւ է ձեզի համար՝ եթէ գանոնք համո-
զելով ձեր կողմը բռնել տաք. սակայն հաւատք չընծայ-
էք և մինչև գիւղէն դուրս գալերնիդ՝ հեռացնելու
չէք ձեր քովէն:

Փ Ա Խ Ս Տ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

1. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ.— Խմբապետ, այն վայրին մէջ՝ ուր դուն կը գործես, կը պատահի որ կազմակերպած ժողովուրդին մէջէն որևէ անհատ փախստական կ'ըլլայ և կը դիմէ քեզի: Պարտական ես ընդունելու այդ հալածուածը. եթէ չընդունես՝ կառավարութիւնը կը ձերբակալէ և անտեղի չարչարանքներ կուտայ, վերջն ալ հինգ կամ տասը տարի բանտարկութիւն կը վճռէ: Բանտարկեալը կարող է չի դիմանալ չարչարանքներուն և գիտցածը խօսել: Ձեզի բան չեն կրնար ընել, մինչդեռ այդ ձերբակալածին համար գիւղացիներն ալ կը բռնեն և կ'ըլլայ մեծ խնդիր մը: Կը պատահի, որ այդ ձերբակալածներն ալ իրենց հարևան գիւղացիներն ալ մատնեն: Ուրեմն՝ այդ փախստականները պէտք է ընդունել: Եթէ զինուորութեան ընդունակ և յարմար մէկն է, անհրաժեշտ է որ առնուազն վեց ամիս խմբին զանազան ծառայութիւններ ընէ և միևնոյն ժամանակ զէնք շարժել սորվի: Երբ տեսնաս որ լաւ է իր գործերուն մէջ — զէնք կուտաս: Իսկ եթէ զինուորութիւն ընելու անկարող է՝ կամ քովը կը պահես, կամ ապահով միջոցներով կը զրկես արտասահման: Եթէ չընդունիս և կառավարութիւնը ձերբակալէ՝ չարիքին պատճառը դուն եղած կըլլաս և ժողովուրդը քեզմէ երես կը դարձնէ:

2. ՀԸՅ ԿԻՆ ԿԸՄ ԸՂՋԻԿ.— Որևիցէ հայ կին մը կամ աղջիկ մը երբ կը վտանգւի և թափառական կ'ըլլայ՝ կառավարութիւնը կ'ուզէ ձերբակալել, ուստի պէտք է բերել տաս գայն քու ապրած վայրդ, յանձնես լաւ տուն մը և ապահովես անոր կեանքը: Եթէ այդպէս չես կրնար ընել՝ ապահով միջոցներով կը զըրկես արտասահման: Չ'ըլլայ թէ խումբին հետ պտըտցնես՝ կը խանգարէ ձեզ:

3. ՏԸՃԻԿ ԶԻՆՒՈՐ.— Կը պատահի որ տաճիկ գօրքէն անհատներ գիմեն քեզի՝ իրենց գէնքով: Ընդունէ՛. եկած բոպէին խուզարկէ վրան մանրամասն, յետոյ գէնքը ան քովէն և երեք-չորս ամիս առանց գէնքի քովդ պահէ. այսպէս՝ կը տեսնես թէ որքան հաւատարիմ է: Բայց եթէ եկողը քու ապրած շրջանէն ըլլայ, մի՛ ընդունիր և երեսն անգամ մի՛ տեսնար: Եթէ ընդունես ալ, շուտով զինաթափ ըրէ և հեռացոր արտասահման:

Փախստական թուրք զինուորին ներքին ուժերդ չի յայտնես: Եթէ այդ զինուորները քանի մը հատ ըլլան՝ կրնան օգտակար ըլլալ. կուի ժամանակ քեզի կը բացատրեն տաճիկ գօրքին փողի հնչումները և կ'ըսեն տըրւած հրամանները. թէև երբ կառավարութիւնը իմանայ թէ քովդ փողէն հասկցող կայ՝ փողի հնչումները պարտւաներու կը փոխէ:

ԴՐԱՄԸ ԵՐԿՐԻ ՄԷՋ

1. ՀՆՆԳՆԵՆՆՈՒԹԻՒՆ.- Եթէ երկրի մէջ գրամ ունիս՝ բռնի միջոցներով գրամ չի հաւաքես. աշխատէ՛ ժողովուրդը համոզելու և գիտակցութեան բերելու, որ զինւին ինքնապաշտպանութեան համար: Կարող ես ամէն գիւղի ունեւոր տուներէն ցորեն, պղզուր, իւղ, ոչխար, պանիր և այլ պաշարեղէն հաւաքել տալ ու փոխադրել քու մշտական ապրած տեղդ: Եթէ ամէն գիւղ այս չնչին պահանջդ չի խնայէ, ահագին պահեստի պաշար կ'ունենաս:

2. ԴՐԱՄԻ ՊԸՀՊԸՆՈՒԹԻՒՆ.- Եթէ քովերնիդ գըրամ ունիք, օրինակ՝ 100 ոսկի, 80-ը տւէք տանապետներուն պահելու: Եթէ տանապետները ստիպւին վտանգաւոր տեղ երթալու՝ թող գրամը յետ դարձնեն խմբապետին: Պատերազմական դրութեան մէջ լաւ է, որ գրամը մէկ բնկերոջ քով չի գըտնուի. կրնայ պատահիլ՝ յանկարծ այդ բնկերը սպաննուի, գրամը կը չքանայ և մնացած խումբը կը մնայ ծանր վիճակի մէջ, որմէ կ'օգտուի թշնամին:

ԳԻՒՂԱԿԱՆ ԴԱՏԵՐ

1. ՁԵՐ ԴԻՐՔԸ.— Պատիրէ, որ այն գիւղերն ու քաղաքները, որոնք կազմակերպուած են՝ գանգատի համար կառավարութեան չի դիմեն, այլ իրենց մէջ ընտրուած մարդոց միջոցով վերջացնեն իրենց դատերը: Եթէ այդ ընտրելիները անկարող եղան՝ թող ձեզի դիմեն. դուք խնդիրը քննելով և վկաներով ճշմարտութիւնը հաստատելէ ետք, գործը կը վերջացնէք: Բոլոր դատերը անկողմնակալ կերպով նայեցէք: Անցեալ վճիռները՝ որոնք տրուած են յեղափոխական ընկերներու կողմէ՝ չի փոփոխէք. ընդհակառակը նոյն մտքով վրձուեցէք և աւելի հիմնաւորեցէք: Եթէ փոփոխէք՝ ձեր նահատակուած կամ ողջ ընկերները անպատուած կ'ըլլաք և կը վնասէք յեղափոխական անկողմնակալութեան: Անոնք իրենց խելքով ու խղճով տեսած են այդ դատերը: Եթէ փոփոխէք՝ ժողովուրդն այլ ևս ձեզի ալ չի հաւատար:

2. ՊԵՐՏԵԿԸ ՆՈՒԹԻՒՆ.— Անցած ընկերներու գործունէութիւնը առհասարակ չի վատարանէք: Անոնց նահատակութեամբն է որ մենք եղած ենք փորձառու և պիտի ըլլանք: Չիկայ ազգ մը՝ որ իր տաքտիկին մէջ սխալ գործած չ'ըլլայ: Անոնք ալ իրենց սխալներովն է՝ որ ուղղած են յետագայ տաքտիկը:

ԶԷՆՔԸ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

ՀՐԱՅՄԱՆՆԵՐ.— Երկրին մէջ մէկ փամփուշտը 5 դրուշ կ'արժէ, մէկ ալյուարին՝ 16 ոսկի, մէկ բերդանի հրացանը՝ նոյնպէս 16 ոսկի, ան ալ մեր թշնամիներէն կը գնենք: Եղեր է ժամանակ, որ մէկ բերդանը 18 ոսկիի ալ առնւեր է. հետը տւեր են 30-50 փամփուշտ, անոր ալ կէսը կեղծ, վառօդի տեղ փոշի լեցուցած կամ կապսիւլի վրան շոր դրած և վրան ալ քիչ մը վառօդ լեցուցած՝ որ կրակ չիյնայ: Տեսակ մը հրացան ալ կայ, որ չերթէգները կը շինեն. շեշխանաները այնալիի կը դարձնեն ու կը ծախեն 7-8 ոսկիի. ասոնք 5-10 փամփուշտէն աւելի չեն կրակեր, կամ փամփուշտը կ'ուռեցնեն՝ մէջը կը թողուն, կամ կէսը կը կտրեն՝ մէջը կը թողուն: Բերդան հրացանները՝ որոնք 16-18 ոսկի կ'արժեն, ժողովուրդին ինքնապաշտպանութեան համար լաւ են՝ եթէ փամփուշտ ունենան: Սահմանի քիւրդերը ուսական մօտինը կ'առնեն 30-40 ոսկի. իսկ մէկ փամփուշտը 5 դուրուշով շատ են առած:

Տաճկական զօրքին ձեռքը գտնուած հրացանը տասնհարածեան է. ինը փամփուշտ ներքևի խողովակին մէջ կ'երթայ, տասներորդը՝ իսկական խողովակին մէջ կը դրուի: Այնալիները և ուսական բերդանները չեն կրնար մրցիլ անոնց հետ, անոնք աւելի հեռուն կը ձգեն: Բերդանները երեսուն տարի առաջ շինուած հրացաններ են, որոնց մէջի գծերը մաշուած են — գնդակը շատ թոյլ կ'ելլայ մէջէն: Այնալիները բերդանկաններէն ա-

ւելի լաւ են, բայց ասոնք ալ չեն կրնար մրցել տաճկական տասնհարածեան հրացաններու հետ: Այդ տասնհարածեան հրացաններն ալ իրենց կարգին չեն կրնար մրցիլ ոուսաց կառավարական մօսիներուն հետ՝ եթէ փամփուշտ ըլլայ:

Թիւրք կառավարութիւնը տեսնելով օտար ազգերու ունեցած վերջին սիստեմի հրացանները, որոնք 2000 մեթր կը ձգեն՝ ինչ որ կ'ընէ 3000 քայլ, համոզելով որ իր հրացանները չեն կրնար մրցիլ անոնց հետ, ինքն ալ երկու տարի առաջ գերմանական գործարանի մը յանձնարարեց 300,000 հատ մաուզէր հինգհարածեան հրացաններ, որոնք նոյնպէս 2000 մեթր կամ 3000 քայլ կը ձգեն: Ասոնց մէկ մասն արդէն ստացած և բաժնած է Պօլսոյ զօրքերուն և պուլկար-տաճկական սահմանապահ զինուորներուն:

Ի նկատի ունենալով այս ամենը՝ մենք այլևս չենք կրնար մեր զինուորներուն ձեռքը բերդան կամ այնալի տալ պէտք է այնպիսի զէնքեր տանք՝ որոնք թշնամիին ձեռքի զէնքերէն աւելի լաւ ըլլան և մաքուր, որպէսզի մենք՝ թուով քիչ՝ կարողանանք մրցիլ թշնամուն դէմ: Ուրիշ խօսքով՝ — մեր զինուորները պէտք է զինել Մօսիսի կամ Մաուզէրի հրացաններով:

ՔԻՒՐԴԵՐԸ ԵՒ ՔՐԴԱԿԱՆ ՄԻՒԹԻՒՆ

Կան մարդիկ, որոնք կ'ըսեն, — կարելի չէ՞ քիւրդերու հետ միանալ: Բայց չեն մտածեր թէ՛ ինչո՞վ: Անոնք ո՛չ ազգակից են մեզի, ո՛չ կրօնակից, ո՛չ ալ կապած մեզի հետ որևէ գաղափարով: Քիւրդը իր ազատութիւնը ձեռք բերած է լիովին. ոչ գօրք կուտայ, ոչ տուրք կուտայ, ոչ կը հալածւի, ոչ ալ պատիւը կը բռնաբարւի: Այս բոլորէն ազատ մնալէն գատ՝ ինքը զինած՝ քեզ կը թախէ, կը սպաննէ, քու պատիւդ կը բռնաբարէ, քու հարստութիւնովդ ու քրտինքովդ ձեռք բերած օրական ապրուստդ ձեռքէդ կը խլէ ու կուտայ հրացանի, կը գնէ առատ փամփուշտ, կը հեծնէ լաճի մը ու ազատ ման կուգայ լեռներ ու դաշտեր: Նոյնը կ'ընէ կառավարութիւնը և դեռ աւելին:

Մեզմէ շատեր խօսեր են քիւրդ ցեղապետներու հետ: Անոնք միշտ սա՛ միտքը յայնած են թէ՛ — „Մենք օրւան եղանակին կը հետեինք. շնորհիւ ձեր շարժումներուն՝ կառավարութիւնը մեզի թոյլ տւած է ամէն բան ընելու և վայելելու. այսօր այսպէս կ'ընենք, վաղն ալ՝ եթէ որեւիցէ փոփոխութիւն ստացաւ երկիրը, անմիջապէս կը հետեինք այդ փոփոխութեան : Եւ ճշմարիտը կը խոստովանին ըսելով. „Մենք ձեզ կը սպաննենք, կը հալածենք, կ'անպատուենք. եթէ ուզենք ձեր աղջիկները կը փախցնենք կառավարութիւնը ոչինչ չընեն մեզի, ընդհակառակը կը քաջայերէ :

Քիւրդերու մէջ կան անհատներ՝ որոնք բարիք կ'ընեն մեզի, ան ալ շատ գաղտնի: Ասոնք ալ կառա-

վարութենէն ցաւ տեսած են,— կամ հայրերնին են արստուած կամ ջոջ-պապերնին: Կան նաև անհատներ՝ որոնք գիտակցութեան եկած են. կը տեսնան կառավարութեան ըրած գազանութիւնները և կը մտածեն իրենց ապագան, ուստի կ'ընեն մեզի մասնաւոր բարիքներ, բայց շատ վախով և զգուշութեամբ:

Քիւրդերու ըրածն ինչո՞ւ ցաւ կուտայ մեզի. ամէն բան կառավարութեան թելադրածն ու թոյլ տուածն է: Ռուսական սահմանէն բռնած՝ մինչև երկրի խօրքերը՝ բոլոր քիւրդ ցեղերը Սուլթանի համար բերդեր ու թնդանօթներ են և երկրի պաշտպանները: Այն հայերը՝ որոնք քիւրդերու մէջ կ'ապրին, անոնց ստրուկներն են. քիւրդը կարող է իր ունեցած հայերու գլուխները 30-40 ոսկիի ծախել ուրիշի մը: Եւ այդ ցեղերը շատ-շատ են. Հէդարանցին, Ջալալցին, Սիփիկցին, Հէսնանցին, Ջրարանցին, Մոտկանցին, Խիանցին, Պղբեցին, Խերզանցին, Պողկցին, Պէլէկցին, Սուլուխցին, Պէքրանցին, Ռըշկոթանցին, Մլանցին և այլն, և այլն: Այս բոլոր ցեղերը 150,000 զինուած մարդ կարող են հանել, բացի առանց զէնքի գտնուածը: Ասոնք կ'ապրին մեր երկրի մէջ՝ տարածուած պարսից և ռուսաց սահմանագլուխները, Վանի հիւսիսային կողմը, Ալաշկերտ, Սիփան, Բաղէշ, Խնուս, Սասուն ու մինչև Տիգրանակերտ:

Այս բոլոր ցեղերը այն ժամանակ կը միանան մեզի հետ, երբ Սուլթանական գազանային ըէժիմը երկրէն վերնայ. և շատ շուտով պիտի միանան ու մեզի հետ երկիրը պաշտպանեն ապագայ թշնամիներու դէմ: Այսօր մենք միմեկ ենք, իբրև կուտ, և կը տանջուինք անոնց ձեռքը. վաղն ալ՝ երբ երկիրը մեր աշխատանքով և արիւնով բարեփոխուի, պիտի միանան մեզի և հաւասար իրաւունքի տէր դառնան, ինչպէս իրենք ալ կ'ըսեն:

Որևիցէ տեղ երբ քիչ ուժ կը կազմենք, ուժի ազդեցութեան տակ կը խոնարհին և կը սկսին բարեկա-

մութին ընել մեզի. բայց երբ կառավարութիւնը հրաւիրեց և հրաման ըրաւ զարնելու, ամենէն առաջ նոյն բարեկամութիւն ընող ցեղը կուգայ զարնելու. եթէ չի գայ՝ կառավարութիւնը պատճառ մը բռնելով՝ կը յարձակի այդ ցեղին վրայ ու կ'ոչնչացնէ: Այդ ցեղը տեսնելով՝ որ կառավարութեան հրահանգով 10-20 ցեղ եկած է կուելու, ինքը չի կրնար մերժել. ստիպած է գալու: Խօսքը այն տեղերու համար է, որոնք կառավարութենէն ցաւ տեսած են և որոնք շատ քիչ են:

Սուլթանը բոլոր ցեղերու շէյխերուն և ցեղապետներու նշաններ և մասնաւոր ընծաներ կը զրկէ միշտ. և շէյխերը կ'աշխատին ցեղերը իրարու հետ հաշտ պահել. երբ կառավարութիւնը կուի մը համար հրաման ըրաւ՝ առաջ շէյխերը վեր կը կենան, իսկ ժողովուրդը ստիպած է հետեւելու խոնարհութեամբ:

ՔԻՒՐՏԵՐՈՒ ՀԵՏ.— 1. Քիւրդ անհատներու հետ բարեկամութիւն և յարաբերութիւն ունեցիր, բայց չըլլայ՝ որ վստահիս անոնց. միշտ զգուշ եղիր: Անոնց բարեկամութենէ կ'օգտուիս այսպէս՝ — քու զրամովդ քեզի համար արճիճ, վառօդ, ծծումբ և ուրիշ նիւթեր կը բերեն:

2. Կը պատահի որ քիւրդերը կը հիւրասիրեն քեզ. հաւատք չընծայես: Կամ անոնց հացը չի պիտի ուտես, կամ եթէ չես ուզեր անպատել զանոնք, սեղանին քեզի հետ նստեցուր շատ յայտնի քիւրդեր՝ աղաներէն:

3. Քիւրդերու հետ բարեկամութեան ժամանակ՝ սովորաբար զէնքի փորձերու կը հրաւիրեն ձեզ. ուստի պէտք է որ միշտ լաւ նշան առնողներ գտնուին հետդ:

4. Զինուորները քիւրդերու կամ առհասարակ օտարներու ներկայութեամբ պէտք է մեծ յարգանք ցոյց տան խմբապետին և անոր տւած հրահանգները՝ ըստ չանցած՝ կատարեն:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ

Վերջացնելով այս գրքոյկը, պարտք կը զգամ յայտարարելու թէ՛ ես ոչ զինուորական վարժարանի մը ընթացքը աւարտած եմ, ոչ ալ մասնագիտական ճիւղ մը մշակած. հետևաբար յաւակնութիւն չունիմ երբէք մասնագիտական գործ մը ներկայացնելու իմ հայրենակիցներուս: Կեանքը ինքն է եղած՝ իր փորձառութիւնով՝ իմ, ինչպէս նաև իմ շատ մը ընկերներուս դաստիարակը: Ի հարկէ սրտանց կը փափաքէի, որ օր մը, և այն մօտաւոր ապագայի մէջ, զիտապէս, մասնագիտական կըրթութեամբ օժտուած երիտասարդներ յաջորդէին մեզի և աւելի յաջողութեամբ, աւելի ձեռնհասութեամբ վարէին մարտական բանակը:

Սակայն, չեմ կրնար այս առթիւ իմ ունեցած մէկ ճշմարիտ ցաւս ծածկել: Մօտաւորապէս երկու տարիէ ի վեր արտասահման կը գտնուիմ և պատեսութիւնն ունեցած եմ մօտէն ճանչնալու արտասահմանի այլ և այլ հայ գաղութներու երիտասարդութիւնը: Թողունք անցեալը. տասնըհինգ տարիներէ ի վեր հայութեան համար արդէն զէնքն ու զի նա վարժութիւնը դարձած է կենսական, հարկադրողական անհրաժեշտութիւն: Երկրէն դուրս գտնուող երիտասարդներէն ոմանք գուցէ իրենց աչքերով տեսած են՝ թէ ինչպէս զօրաւորին սուրը արիւնով լաց հայրենիքը և իր առջև խոնարհեցուց մեր հայրերը, մեր մայրերը, քոյրերը ու ամէնքս: Չի տեսնողներն ալ իրենց ականջներովը լսեցին այս ամէնը ու կը լսեն ամէն օր: Բայց ի՞նչ են ըրած մինչև հիմա՝

խրատելու համար կեանքի դասերէն և չը կրկնելու անցեալին տխուր սխալները: Ոչինչ: Չի տեսայ երկու վայր, ուր տասը-քսան երիտասարդներ քով քովի գալին և բռնութեան սահմաններէն հեռու և ամէն կերպով ազատ՝ օտար երկիրներուն մէջ մէկ-մէկ գէնք առնէին ձեռքերնին և զինավարժութեան հետեւէին. չի տեսայ և ցառով կ'ըսեմ ասիկա: Հապա ի՞նչու կը քննադատեն զանոնք, որ երկրին մէջ ո՛չ գէնք առնելու միջոց, ո՛չ ալ վարժելու դիւրութիւն ունին:

Ամէն օր երևան եկած դէպքերն ու անոնց յայտնութիւնը՝ մեզի բացարձակօրէն կը սորվեցնեն թէ հայը, ըլլայ Տաճկաստան, ըլլայ Կովկաս, Պարկաստան կամ ուրիշ տեղ, իր կեանքը պահպանելու մէկ միջոց մը միայն ունի, մէկ պաշտպան մը, այն ալ գէնքն ու զինավարժութիւնն է: Մարդ ո՛չ հերոս, ո՛չ ալ կուռղ կը ծնի. գէնքն է որ մարդուն կուելու ընդունակութիւն կուտայ և զիմադրութեան ոգի կը ստեղծէ անոր մէջ: Անոնք որ կը սպասեն՝ թէ մեր նոր սերունդները առանց գէնքի ընտելանալու, առանց զինավարժութեամբ պարապելու՝ վաղը կուռղներ պիտի դառնան՝ տղայական միամտութիւննին է որ կը յայտնեն, ուրիշ ոչինչ: Այդ կերպով՝ եթէ դարեր ալ սպասենք, նորէն երկչոտներ, ստրուկներ պիտի մընանք, և նորէն մեր կեանքն ու պատիւը պիտի ըլլան օտարի ձեռքի խաղալիքը:

Ես չեմ որ կը հրաւիրեմ ձեզ, արտասահմանեան հայ երիտասարդներ, այլ դժբաղդ Հայրենիքին հօզն ու քարը իրենց արիւնով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներն են, որ կոչ կ'ընեն ձեզի՝ գէնքի՛, զինավարժութեան ու վրէժն գրութեան:

Լսեցէք անոնց Չայնը՝ որ մեր կեանքին Չայնն է:

Գ Լ ՈՒ Խ Ն Ե Ր ՈՒ Ց Ա Ն Կ Ը

—

1. 201	3
2. Զինուորական խորհուրդ	5
3. Օժանդակ խմբեր	7
4. Խումբը երկրի մէջ	26
5. Թռուցիկ խմբեր	31
6. Ապստամբութիւն	33
7. Մարտական ընդհանուր հրահանգներ	40
8. Զգուշութիւններ ճանապարհին	47
9. Կռիւներու մասին անհրաժեշտ գիտելիքներ	56
10. Փախստականներ	68
11. Դրամը երկրին մէջ	70
12. Գիւղական դատեր	71
13. Զէնքը երկրին մէջ	72
14. Քիւրդեր եւ քրդական միութիւն	74
15. Երիտասարդներուն	77

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Ֆր. ս.
1.	Ապսամբական ոգի (սպառած).10
2.	Յեղափոխական կեանքից (սպառ.)05
3.	Գաղտնի սպարան (սպառ.)05
4.	Գիթական սօցիալիզմ. Ֆ. ԷնԳելՍ (սպառ.)40
5.	Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր. (Գ. սպագր.)	—
6.	Կուկունեան խմբի արուանգը. (սպառ.)20
7.	Կարնոյ յիշատակին (Չորս հատած) ,,50
8.	Հ. Յ. Դ. Երկրորդ ընդհ. ժողովի ասեմագրութիւնը	—
9.	Քրիչներ, Homo homini lupus. ՎԱՐԴԳԷՍ (սպառ.)20
10.	Երիտասարդներին. Պ. ԿՐԱՊՕՏԿԻՆ (սպառ.)20
11.	Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Ա. (սպառ.)30
12.	” ” ” Բ. ”60
13.	Ամբոխային տրամաբանութիւն. ԷԼԼԷՆԻ. (սպառ.)50
14.	Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Գ. ”30
15.	Հայաստան եւ Մակեդոնիա.50
16.	Կովկասեան վերքեր. Է. ԱԿՆՈՒՆԻ. (սպառած)	3.—
17.	Հայրենիքի գաղափարը. Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպառ.)	1.—
18.	Կարձակերպական կանոններ. (Բ. սպագր.)	—
19.	Դեպի կոիւ. Է. ԱԿՆՈՒՆԻ.	2.—
	(Կովկաս՝ 1 րուրի, Ամերիկա՝ 1/2 դօլար).	
20.	Յեղափոխականներ. Ս. ՆԻՎՎԱՆԵԱՆ (սպառ.)20
21.	Նախագիծ Կովկասեան գործունեութեան. (Բ. տպ.)	—
22.	Подвиги царизма. В. Апаратский.	50
23.	Les tueries de Bakou A. ARAZI.20
24.	Յեղափոխական դաշն.20
25.	Հ. Յ. Դ. Երրորդ ընդհ. ժողովի ասեմագրութիւնը.	—
26.	Կոչ Մահմեթականներին (թուրքերէն).10
27.	Les Plaies du Caucase E. AKNOUNI.	2.—
28.	Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Գ. գրոյկ.40
29.	Մեծ մարդասպանի դեմ (Դատաւարութիւն).50
30.	Վիսօշի բազէն. ՎՏԱՐԱՆԴԻ.50
31.	Յեղափոխականի մեքերը. ՔՐ. ՄԻՔԱՑԷԼԵԱՆԻ	1.—
32.	Հայորդիները. ՄԻԱՄԱՆԹՕ.50
33.	Սասուն-Մուշի կոիւները50
34.	Հայկական տանջանքները եւ Եւրոպան. ԲԵՐՆՇՏԱՍՅՆ	.50
35.	Մարտական հրահանգներ. ԱՆԴՐԱՆԻԿ.	1.—

Դիմել՝ «Դրօշակ»ի խմբագրութեան, Ժ ը ն ե վ:

